



UNITED NATIONS
HANDBOOK ON HUMAN RIGHTS

ՄԻԱԿՈՐԿԱԾ ԱԶԳԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՁԵՌՆԱՐԿ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԱԿ-ի Հանրային
տեղեկատվության
վարչություն

Երեւան, 2010

UNITED NATIONS HANDBOOK
ON HUMAN RIGHTS

ՄԻԱԿՈՐԿԱԾ ԱԶԳԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՁԵՌՆԱՐԿ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության
Երևանյան գրասենյակ
Երևան, 2010

United Nations Handbook on Human Rights gives brief information on United Nations Human Rights mandate, its instruments and mechanisms. All human beings are endowed with basic human rights by virtue of their common humanity, to live a life of freedom and dignity. The human rights are universal, inalienable, indivisible and interrelated.

As a principle the ideology of the basic human rights is embodied in the UN Charter, Universal Declaration of Human Rights and in the numerous declarations and constitutions throughout the world.

United Nations Handbook on Human Rights includes information on the UN Human Rights core documents, treaty system of that sphere, conventional bodies monitoring their implementation, as well as other procedures, Human Rights Council, the High Commissioner for Human Rights. One can also find basic information about the commitments of the Republic of Armenia in the field.

*Compiled and prepared for publication by UN DPI Information Officer
Armineh Haladjian.*



UN Department of Public Information
Yerevan Office
UN AN-2000-December 2010
UNO/DPI Yerevan/110

Contents

Introduction	7
1. The Definition of Universal Rights in the Universal Declaration	10
1.1. International Bill of Human Rights	12
1.2. Core Human Rights Treaties	14
1.3. Vienna World Conference on Human Rights.....	16
1.4. High Commissioner for Human Rights	17
2. Human Rights Protection Treaty Machinery and Monitoring Bodies...	20
3. The Human Rights Council.....	28
3.1. What is the Human Rights Council?.....	28
3.2. How do the Human Rights Council, its Mechanisms and Mandates work?.....	30
3.3. Mandates and Mechanisms of Human Rights Council.....	31
A. Universal Periodic Review	31
B. Human Rights Council Advisory Committee	37
C. Human Rights Council Complaint procedure.....	38
D. Human Rights Council Special procedures	49
E. Working Groups of the Human Rights Council	56
F. Social Forum	58
G. Forum on Minority Issues.....	58
H. Expert Mechanism on the Rights of Indigenous Peoples	60
4. The Role of the Human Rights Treaty System in Strengthening Human Rights Protection Systems at the National Level	61
5. The Millennium Development Goals and Human Rights.....	64
6. The Commitments of the Republic of Armenia to the United Nations Human Rights Machinery	67
7. Appendices	74
8. List of Acronyms	91
9. List of Sources Used.....	94

Մարդու իրավունքների վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության սույն ձեռնարկը համառոտ անդրադառնում է մարդու իրավունքների ոլորտում Միավորված ազգերի կազմակերպության լիազորություններին, գործիքներին ու մեխանիզմներին: Բոլոր մարդիկ օժտված են մարդ արարած լինելու հանգամանքով պայմանավորված մարդկային իրավունքներով և հիմնարար ազատություններով՝ հանուն ազատ ու արժանապատիվ կյանքի: Մարդու իրավունքները համընդհանուր են, անօտարելի, անքակտելի և փոխկապակցված:

Ըստ էության, մարդու հիմնական իրավունքների գաղափարախոսությունն արտացոլված է ՄԱԿ-ի կանոնադրությունում, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, այլ հռչակագրերում և աշխարհի բազմաթիվ երկրների սահմանադրություններում:

«Միավորված ազգերի կազմակերպության ձեռնարկ Մարդու իրավունքների վերաբերյալ» գիրքն ընդհանուր տեղեկատվություն է ընդգրկում մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթերի, այդ ոլորտի պայմանագրային համակարգի, կոնվենցիաների իրականացումը վերահսկող մարմինների ու այլ ընթացակարգերի, Մարդու իրավունքների խորհրդի, Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի, ինչպես նաև այդ բնագավառում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների մասին:

Կազմել ու հրատարակության է պատրաստել ՄԱԿ-ի ՀՏՎ տեղեկատվության գծով պատասխանատու Արմինե Հալաջյանը:



UN Department of Public Information
Yerevan Office
UN AN-2000-December 2010
UNO/DPI Yerevan/110

Բովանդակություն

Ներածություն	7
1. Համընդհանուր իրավունքների սահմանումը Համընդհանուր հռչակագրում.....	10
1.1. Մարդու իրավունքների միջազգային օրինաչառը	12
1.2. Մարդու իրավունքների հիմնարար պայմանագրերը	14
1.3. Մարդու իրավունքների վերաբերյալ Վիեննայի համաշխարհային խորհրդաժողովը	16
1.4. Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը	17
2. Մարդու իրավունքների պաշտպանության պայմանագրային մեխանիզմներն ու վերահսկող մարմինները.....	20
3. Մարդու իրավունքների խորհուրդը.....	28
3.1. Ի՞նչ է Մարդու իրավունքների խորհուրդը	28
3.2. Ինչպե՞ս են գործում Մարդու իրավունքների խորհուրդը և խորհրդի մեխանիզմներն ու մանդատները	30
3.3. Մարդու իրավունքների խորհրդի լիազորություններն ու մեխանիզմները	31
Ա. Պարբերական համապարփակ դիտարկում	31
Բ. Մարդու իրավունքների խորհրդի խորհրդատվական կոմիտե... ..	37
Գ. Մարդու իրավունքների խորհրդի՝ բողոքների ընդունման և դիտարկման ընթացակարգ.....	38
Դ. Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգեր	49
Ե. Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խմբեր.....	56
Զ. Սոցիալական ֆորում	58
Է. Փոքրամասնությունների հարցերով ֆորում	58
Ը. Տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների հարցերով փորձագիտական մեխանիզմ.....	60
4. Մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրային համակարգի դերը ներպետական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանության համակարգերն ամրապնդելու գործում	61
5. Հազարամյակի զարգացման նպատակները և մարդու իրավունքները..	64
6. Հայաստանի Հանրապետության պարտավորությունները ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմներին	67
7. Հավելվածներ	74
8. Հապավումների ցանկ	91
9. Օգտագործված աղբյուրների ցանկ	94

Ներածություն

Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) ունիվերսալ միջազգային միջկառավարական կազմակերպություն է, որն աշխարհի պետություններին օգնում է գտնել հակասությունների ու վեճերի կարգավորման ուղիները և լուծել այն հրատապ խնդիրները, որոնց մարդիկ բախվում են առօրյա կյանքում: ՄԱԿ-ի գործունեության հիմքը կանոնադրությունն է. Միջազգային փաստաթուղթ, որով անդամ պետությունները, մասնավորապես, պարտավորվում են ձեռնարկել համատեղ միջոցներ՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությանն ու քարոզմանը¹:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ մարդկության դեմ կատարված հանցագործություններն ի ցույց դրեցին այն ավանդական տեսակետի սնանկությունը, թե սեփական քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքը բացառապես յուրաքանչյուր պետության ներքին գործն է: «Միավորված ազգեր» անվանումը, որն առաջարկել է ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը, առաջին անգամ գործածվել է 1942 թ. ին՝ «Միավորված ազգերի հռչակագրում», երբ 26 պետությունների ներկայացուցիչներ պարտավորվեցին համատեղ պայքար մղել ֆաշիստական դաշինքի երկրների դեմ: ՄԱԿ-ին նախորդել է Ազգերի լիգան, որն ստեղծվել է համանման պայմաններում՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: 1945 թ. ին 50 պետությունների ներկայացուցիչներ հավաքվեցին Սան Ֆրանցիսկոյում՝ մշակելու Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը: Միավորված ազգերի կազմակերպությունը պաշտոնապես ձևավորվեց 1945 թ. ի հոկտեմբերի 24-ին, երբ կանոնադրությունն ստորագրած պետությունները վավերացրին այն:

ՄԱԿ-ի կանոնադրությունում նշված է, որ կազմակերպության երեք հիմնական խնդիրներն են՝ ապահովել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, պետությունների տնտեսական ու սոցիալական համագործակցությունը և քարոզել ու պաշտպանել «մարդու իրա-

¹ Մանրամասները տես՝ <http://www.un.org/rights> .

վունքների և հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքը բոլորի համար՝ առանց ռասայի, սեռի, լեզվի կամ կրոնի հետ կապված տարբերակման»։ ՄԱԿ-ի բոլոր անդամ պետություններն իրավաբանորեն կապված են միմյանց ՄԱԿ-ի կանոնադրությամբ՝ մարդու բոլոր իրավունքների և ազատությունների լիակատար իրականացման համար մղվող պայքարում։

Սկզբունքորեն, մարդու հիմնական իրավունքները լայնորեն ընդունված և ճանաչված են։ Ամբողջ աշխարհում դրանք ներկայացված են սահմանադրություններում, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրությունում և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում։ Համընդհանուր հռչակագրի դրույթները միջազգային հանրային իրավունքի կշիռ ունեն, քանի որ լայն տարածում ունեն և ընդունվում են որպես պետությունների գործունեությունը գնահատող չափանիշ։ Շատ նորանկախ պետություններ հղում են կատարում Համընդհանուր հռչակագրին կամ դրա դրույթները ներառել են իրենց հիմնական օրենքներում կամ սահմանադրություններում։

Հռչակագրի 30 հոդվածները ներկայացնում են քաղաքացիական, քաղաքական, տնտեսական ու սոցիալական այն հիմնարար իրավունքները, որոնցով պետք է օժտված լինի ցանկացած երկրում ապրող յուրաքանչյուր մարդ։

Խոսելով մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՄԱԿ-ի անցած ուղու մասին՝ հարկ է նշել, որ ՄԱԿ-ը մարդու իրավունքների քարոզման ու պաշտպանության ոլորտում գործում է տարբեր ուղղություններով՝ մի շարք միջազգային կառույցների միջոցով։ Այն հանդես է գալիս որպես *խղճի համաշխարհային մարմնացում, օրինաստեղծ, իրավաբար, դիտորդ և վերահսկիչ, համադասող կենտրոն, հետազոտող, բողոքարկման աստյան, փաստերի անաչառ հետաքննող և դիվանագետ*։ Կազմակերպությունը նշանակալի առաջընթաց է ունեցել ազգերի համար ընդունելի վարքագծի միջազգային չափանիշներ հաստատելու առումով և մշտապես միջազգային հանրության ուշադրությունն է հրավիրում այն գործողությունների վրա, որոնք վտանգում են այդ չափանիշները։

Անգնահատելի են կազմակերպության նվաճումները միջազգային իրավունքի կանոնակարգման գործում: Կազմակերպության ստեղծած մեխանիզմների միջոցով ոչ միայն սահմանվում և գործածության մեջ են դրվում մարդու իրավունքները, այլև վերահսկվում է պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը, հետաքննվում՝ խախտումները:

Կազմակերպությունը հազարավոր բողոքներ ու հաղորդագրություններ է ստանում մարդու իրավունքների խախտման մասին, որոնց առնչությամբ պարզաբանումներ է պահանջում համապատասխան կառավարություններից և կոչ անում երաշխավորել ենթադրյալ տուժողների իրավունքները: Հավաքված տվյալների հիման վրա հսկայածավալ հետազոտություններ և ուսումնասիրություններ են կատարվում, որոնք հետագա քաղաքականության և օրինաստեղծ գործունեության հիմք են դառնում: Եվ վերջապես, կազմակերպության Գլխավոր քարտուղարը և Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարն անդամ երկրների կառավարությունների հետ առանձնագրույցների ընթացքում քննարկում են մարդու իրավունքների հետ կապված իրենց մտահոգություններն այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝ բանտարկյալների ազատ արձակումը, մահապատժի դատավճիռների վերանայումը և այլն:

1. Համընդհանուր իրավունքների սահմանումը համընդհանուր հռչակագրում

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (ՄԻՀՀ) տասնամյակների ընթացքում ձևավորված միջազգային հումանիտար իրավունքի հիմնաքարն է:

Դրա 1-ին և 2-րդ հոդվածներն ասում են, որ *«բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով»* և կարող են օգտվել հռչակագրով սահմանված բոլոր իրավունքներից ու ազատություններից՝ *«առանց որևէ տարբերակման այնպիսի հիմքերով, ինչպիսիք են՝ ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, դասային պատկանելությունը կամ որևէ այլ կարգավիճակ»*:

3-ից 21-րդ հոդվածները բովանդակում են մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների սահմանումները, մասնավորապես՝

- կյանքի, ազատության ու անձի անձեռնմխելիության իրավունքը,
- ստրկությունից ու կախյալ վիճակից ազատ լինելու իրավունքը,
- խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը,
- ամենուրեք իրավասուբյեկտ ճանաչվելու և իրավական պաշտպանության իրավունքը, կամայական ձերբակալման, կալանքի կամ արտաքսման չենթարկվելու իրավունքը, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու հրապարակային դատաքնության իրավունքը, անմեղության կանխավարկածի իրավունքը,
- անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը կամայական միջամտության չենթարկվելու իրավունքը, պատվի կամ բարի համբավի նկատմամբ ոտնձգություններից զերծ լինելու իրավունքը, նման միջա-

մտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանվելու իրավունքը,

- ազատ տեղաշարժվելու իրավունքը, ապաստանի իրավունքը, քաղաքացիության իրավունքը,
- ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը, սեփականություն ունենալու իրավունքը,
- մտքի, խղճի ու կրոնի ազատությունը, համոզմունքի ու արտահայտվելու իրավունքը,
- խաղաղ հավաքների ու միավորումներ կազմելու իրավունքը,
- կառավարմանը մասնակցելու և պետական ծառայության անցնելու հավասար հնարավորության իրավունքը:

22-27-րդ հոդվածներն առաջ են քաշում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնցով օժտված են բոլոր մարդիկ, մասնավորապես՝

- սոցիալական ապահովության իրավունքը,
- աշխատելու իրավունքը, հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունքը,
- արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը,
- հանգստի և ժամանցի իրավունքը,
- առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակ ունենալու իրավունքը,
- կրթություն ստանալու իրավունքը,
- հանրության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:

Եզրափակիչ 28-30-րդ հոդվածներով ընդունվում է, որ յուրաքանչյուր անհատ իրավունք ունի ապրելու սոցիալական կամ միջազգային այն-

պիսի հասարակարգում, որով լիովին կիրականացվեն հռչակագրով սահմանված իրավունքները. այդ իրավունքները կարող են սահմանափակվել միայն այլոց իրավունքների ու ազատությունների ճանաչումն ու հարգանքն ապահովելու նպատակով և ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի և ընդհանուր բարեկեցության պահանջները կատարելու համար, և յուրաքանչյուր անձ իր պարտականություններն ունի այն հանրության առջև, որում ապրում է²:

1.1. Մարդու իրավունքների միջազգային օրինաշարը

ՄԱԿ-ի հիմնադրումից երեք տարի անց ընդունվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը մարդու իրավունքների մասին ներկայիս օրենքների հիմնաքարն է: 1966 թ. ընդունվեցին Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին և Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրերը:

- **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը** (1966 թ.) ունի 148 մասնակից պետություն: Դաշնագրի նպատակն է՝ քարոզել ու պաշտպանել մարդու իրավունքները, այդ թվում՝

1. արդար և բարենպաստ պայմաններում աշխատելու իրավունքը,
2. սոցիալական պաշտպանվածություն, համապատասխան կենսամակարդակ և ֆիզիկական ու մտավոր բարեկեցության ամենաբարձր մակարդակի վրա գտնվելու իրավունքը,
3. կրթության իրավունքը և մշակութային ազատության ու գիտական նվաճումներից օգտվելու իրավունքը:

Դաշնագիրն ապահովում է այս իրավունքների իրականացումը՝ առանց որևէ խտրականության: Հայաստանը Տնտեսական, սոցիալա-

² ՄԻՀՀ 30 հոդվածների առարկայական ցանկը տե՛ս Հավելված 1-ում:

կան և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին միացել է 1993 թ. սեպտեմբերի 13-ին, իսկ դրան կից կամընտիր արձանագրությունն ստորագրել է 2009 թ. սեպտեմբերի 29-ին:

- **Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը** և դրան կից առաջին կամընտիր առաջին արձանագրությունն ընդունվել են 1966 թ.: Երկրորդ կամընտիր արձանագրությունն ընդունվել է 1989 թ.: Դաշնագիրն ունի 151 մասնակից պետություն, իսկ արձանագրությունը՝ 104:

1. Դաշնագիրն առնչվում է այնպիսի իրավունքների, ինչպիսիք են՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը, օրենքի առջև հավասարության, արդար դատաքննության իրավունքը և անմեղության կանխավարկածը, մտքի, խղճի և կրոնի ազատությունը, կարծիք ունենալու և արտահայտվելու ազատությունը, խաղաղ հավաքների իրավունքը, հասարակական գործերին և ընտրություններին մասնակցելու ազատությունը և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը:
2. Դաշնագիրն արգելում է կյանքից կամայական զրկելը, խոշտանգումը, դաժան կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը, ստրկությունը և հարկադիր աշխատանքը, կամայական ձերբակալությունը կամ կալանքը, կամայական միջամըտությունն անձնական կյանքին, պատերազմի, ռասայական կամ կրոնական ատելության քարոզումը:

1993 թ. հունիսի 23-ին Հայաստանը միացել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին և դրան կից առաջին կամընտիր արձանագրությանը:

Հռչակագիրը, երկու դաշնագրերը և դրանց կից կամընտիր արձանագրությունները կազմում են **Մարդու իրավունքների միջազգային օրինաշարը**: Եթե Հռչակագրի դրույթները հանձնարարական բնույթ ունեն և ընդունվում են որպես պետությունների գործունեությունը գնահատելու չափանիշ, ապա դաշնագրերի դրույթները պարտադիր ուժ ունեն դրանք վավերացրած երկրների համար, որոնց պարտավորություններ

րի կատարումը վերահսկվում է հատուկ ստեղծված մարմինների միջոցով:

1.2. Մարդու իրավունքների հիմնարար պայմանագրերը³

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված մոտ 90 կոնվենցիաների ու հռչակագրերի ստեղծման սկիզբը դրեց: Երբ պետությունները վավերացնում են այս պայմանագրերը, դրանով իսկ պայմանավորվում են, որ մարդու իրավունքներին վերաբերող իրենց օրենսդրությունն ու գործողությունները կվերանայվեն անկախ փորձագիտական մարմինների կողմից:

- **Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան** (1965 թ.) վավերացրել է 173 երկիր: Ելնելով այն նախադրությից, որ ռասայական տարբերություններով պայմանավորված գերիշխանության որևէ քաղաքականություն արդարացի չէ, գիտականորեն կեղծ է և բարոյապես ու իրավական տեսանկյունից դատապարտելի, կոնվենցիան սահմանում է «ռասայական խտրականության» հասկացությունը և անդամ երկրներին պարտավորեցնում միջոցներ ձեռնարկել այն և՛ օրենսդրությամբ, և՛ գործնականում վերացնելու ուղղությամբ: Հայաստանն այս կոնվենցիային միացել է 1993 թ. հունիսի 23-ին:
- **Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան** (1979 թ.), իր 186 մասնակից պետություններով երաշխավորում է սեռով պայմանավորված խտրականության վերացումը և սեռերի իրավահավասարությունը, հատուկ միջոցներ է ձեռնարկում քաղաքական և հասարակական կյանքում, ազգության, կրթության, աշխատանքի, առողջության, ամուսնության և ընտանիքի հարցերում կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու ուղղությամբ: Հայաստանն այս կոնվենցիային միացել է 1993 թ. սեպտեմբերի 13-ին, իսկ կից կամընտիր արձանագրությանը՝ 2006 թ. սեպտեմբերի 14-ին:

³ Տես Հավելված 2: Առավել մանրամասն՝

<http://treaties.un.org/Pages/Treaties.aspx?id=4&subid=A&lang=en>

- **խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան** (1984 թ.), իր 147 մասնակից երկրներով, խոշտանգումը սահմանում է որպես միջազգայնորեն դատապարտելի հանցանք, պարտավորեցնում պետություններին կանխել այն և պատժել հանցագործներին: Որևէ բացառիկ հանգամանք չի կարող խոշտանգման արդարացում ծառայել, և ո՛չ էլ խոշտանգողը կարող է իր գործողություններն արդարացնել հրամանների ներքո գործելու հանգամանքով: Հայաստանն այս կոնվենցիային միացել է 1993 թ. սեպտեմբերի 13-ին, իսկ կից կամընտիր արձանագրությանը՝ 2006 թ. սեպտեմբերի 14-ին:
- **Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան** (1989 թ.), որին մասնակցում են 193 պետություններ, ընդգծում է հատկապես երեխաների խոցելիությունը և երեխաների պաշտպանության հարցերն ի մի բերում մի համապարփակ օրենքի մեջ: Կոնվենցիան երաշխավորում է խտրականության բացառումը և ընդունում, որ երեխայի հիմնական շահերը պետք է ընկած լինեն բոլոր գործողությունների հիմքում: Հատուկ ուշադրության են արժանացել փախստական, հաշմանդամություն ունեցող և ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաները: Մասնակից երկրները պետք է երաշխիքներ ապահովեն երեխաների գոյատևման, զարգացման, պաշտպանության և ներգրավվածության համար: Հայաստանն այս կոնվենցիային միացել է 1993 թ. հունիսի 23-ին, իսկ կից կամընտիր արձանագրություններին՝ 2005 թ. Սեպտեմբերի 30-ին:
- **Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան** (1990 թ.) սահմանում է հիմնական իրավունքներ և սկզբունքներ, ինչպես նաև միջոցառումներ՝ միգրացիայի ողջ ընթացքում՝ միգրանտ աշխատողներին պաշտպանելու ուղղությամբ՝ անկախ տվյալ երկրում նրանց գտնվելու օրինականությունից կամ անօրինականությունից: Կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2003 թ. հունիսի 1-ին, 44 մասնակից պետություն ունի: Հայաստանն այս կոնվենցիային դեռևս չի միացել:

- **Բոլոր մարդկանց հարկադրական անհետացումից պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիա.** 2006 թ. դեկտեմբերի 20 թվակիր սույն պայմանագիրը դեռևս ուժի մեջ չի մտել, բայց արդեն ունի 87 ստորագրություն և 19 մասնակից: Համարվում է մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերից մեկը: Հայաստանն այս պայմանագիրն ստորագրել է 2007 թ. ապրիլի 10-ին:
- **Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան** (2006 թ.) ունի 95 անդամ պետություններ, և երաշխավորում է սահմանափակ կարողություններով անձանց բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրականացումը՝ բացառելով հաշմանդամությամբ պայմանավորված խտրականության որևէ դրսևորում: Հայաստանն այս պայմանագիրն ստորագրել է 2007 թ. մարտի 30-ին ու 2010 թ. հոկտեմբերի 22-ին վավերացրել է այն, իսկ կամընտիր արձանագրությունը դեռևս կրում է 2007 թ. մարտի 30-ին դրված ՀՀ ստորագրությունը միայն:

1.3. Մարդու իրավունքների վերաբերյալ Վիեննայի համաշխարհային խորհրդաժողովը

1968 թ. նշվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի քսանամյակը: Այդ տարին հռչակվեց Մարդու իրավունքների միջազգային տարի, որի գլխավոր իրադարձություններից մեկը Թեհրանում տեղի ունեցած Մարդու իրավունքների միջազգային խորհրդաժողովն էր: Սա առհասարակ կառավարությունների առաջին խորհրդաժողովն էր՝ նվիրված մեկ առանձին թեմայի:

Մարդու իրավունքների վերաբերյալ երկրորդ համաշխարհային խորհրդաժողովը, որ տեղի ունեցավ 1993 թ. Վիեննայում, և որին մասնակցում էր 171 երկիր, վերահաստատեց մարդու իրավունքների համընդհանուր բնույթն ու կենտրոնական դերը: Խորհրդաժողովում ընդունված Վիեննայի հռչակագրում և գործողությունների ծրագրում մասնակից պետությունները հայտարարեցին, որ մարդու իրավունքները դարձել են «*միջազգային հանրության օրինաչափ մտահոգության առարկա*», և որ «*մարդու բոլոր իրավունքները համընդհանուր, անօտարելի, անքակտելի և փոխկապակցված են*»: Խորհրդաժողովը վերահաստատեց նաև **զարգացման իրավունքը**՝ որպես համընդհա-

նուր իրավունք, ինչպես նաև մարդու իրավունքների և անհատի զարգացման միջև անքակտելի կապը: Ի լրումն՝ հաստատվեց, որ «*ժողովրդավարությունը, զարգացումը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքը փոխադարձ կապի մեջ են և լրացնում են միմյանց*»: Հստակ տարբերակվեցին մարդկանց այն խմբերը, որոնց իրավունքներն առանձնակի պաշտպանության կարիք ունեն. կանայք, տեղաբնիկ ժողովուրդները, փախստականները, քաղաքացիություն չունեցող անձինք, երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք, ապօրինաբար ազատազրկվածները և բռնի բնաջնջման զոհերը, ինչպես նաև միգրանտ աշխատողները և նրանց ընտանիքները:

Բացի այդ, ավելի սեղմ ժամկետներ սահմանվեցին մարդու իրավունքների համաձայնագրերի վավերացման համար, հավանության արժանացավ կանանց իրավունքների խախտումների վերաբերյալ հատուկ զեկուցող նշանակելու առաջարկությունը: Առաջարկվեց նաև ավելի մեծ միջոցներ տրամադրել մարդու իրավունքների պաշտպանությանը: Խորհրդաժողովը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային հանձնարարեց նաև Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարի պաշտոն հիմնել:

1.4. Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարը

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 48-րդ նստաշրջանը հաստատեց Վիեննայի հռչակագիրն ու գործողությունների ծրագիրը և հավանություն տվեց Մարդու իրավունքների հարցերով զերագույն հանձնակատարի պաշտոնի վերաբերյալ առաջարկությանը (1993 թ. դեկտեմբերի 20-ի 48/141 բանաձևով): Այդ բանաձևում ամրագրվեցին զերագույն հանձնակատարի պարտականություններն ու լիազորությունները.

- քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային բոլոր իրավունքների, ներառյալ՝ զարգացման իրավունքի կենսագործում ու արդյունավետ պաշտպանություն,

- պետությունների խնդրանքով՝ խորհրդատվական ծառայությունների մատուցում, տեխնիկական և ֆինանսական օգնություն մարդու իրավունքների ոլորտում,
- մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի կրթական և տեղեկատվական ծրագրերի համակարգում,
- գործուն դերակատարություն մարդու իրավունքների լիակատար իրականացման ճանապարհին առկա խոչընդոտների հաղթահարման և աշխարհում մարդու իրավունքների պարբերական խախտումները կանխարգելելու գործում,
- մասնակցություն կառավարությունների հետ երկխոսություններին՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը երաշխավորելու նպատակով,
- միջազգային համագործակցության ընդլայնում մարդու իրավունքների քարոզման և պաշտպանության գործում,
- ՄԱԿ-ի համակարգի միջոցով մարդու իրավունքների քարոզման և պաշտպանության գործունեության համակարգում,
- մարդու իրավունքների արդյունավետության բարձրացման նպատակով ՄԱԿ-ի մեխանիզմների ռազիոնալացում, հզորացում և պարզեցում:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը Գլխավոր քարտուղարի տեղակալն է: Նրան Գլխավոր ասամբլեայի հավանությամբ նշանակում է Գլխավոր քարտուղարը՝ չորս տարի ժամկետով: 2008 թ. սեպտեմբերից ի վեր Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը տկն **Նավանթեմ Փիլեյն** է (Հարավաֆրիկյան Հանրապետություն)⁴: Գերագույն հանձնակատարի գործունեության մասին զեկույցը ներկայացվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին (նախկին հանձնաժողովին) և Տնտեսական ու սոցիալական խորհրդի միջոցով՝ Գլխավոր ասամբլեային:

⁴ Նախորդ հանձնակատարները՝ Խոսե Ալալա Լասոս, Մերի Ռոբինսոն, Սերջիո Կիեյրո դե Մելլո և Լուիզ Արբոր:

Այսպիսով, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գլխավոր հանձնակատարը ՄԱԿ-ի այն պաշտոնյան է, ով մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի գործունեության համար պատասխանատվության հիմնական կրողն է:

Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԻԳՀԳ), որ գտնվում է Ժնևում և ստորաբաժանում ունի Նյու Յորքում, մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի գործունեության հիմնական օղակն է և ծառայում է որպես քարտուղարություն Մարդու իրավունքների խորհրդի, պայմանագրային մարմինների և ՄԱԿ-ի մարդու իրավունքների այլ կառույցների համար: Այն ամեն տարի հազարավոր բողոքներ է ստանում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ, որոնք հանձնվում են ՄԱԿ-ի համապատասխան հանձնաժողովների և կոմիտեների քննարկմանը⁵: ՄԻԳՀԳ-ն նաև տեղային գործունեություն է ծավալում մոտ 30 երկրներում՝ ընդգրկելով ավելի քան 200 պաշտոնյաների: Բացի տեխնիկական օժանդակությունից, ՄԻԳՀԳ-ի տեղական գրասենյակներն իրականացնում են վերահսկման ու իրավունքների պաշտպանության գործառնություններ, ինչպիսիք են, օրինակ, տեղեկատվության հավաքումը, մարդու իրավունքներին առնչվող իրադրության ուսումնասիրությունը և խախտումների մասին զեկույցների ներկայացումը:

⁵ Տե՛ս՝ <http://www.ohchr.org/>

2. Մարդու իրավունքների պաշտպանության պայմանագրային մեխանիզմներն ու վերահսկող մարմինները⁶

Գոյություն ունեն մարդու իրավունքների միջազգային չափանիշների կենսագործումը վերահսկող և մարդու իրավունքների խախտումների մասին գանգատները քննող մի շարք պայմանագրային և արտապայմանագրային մեխանիզմներ:

Այսօրվա դրությամբ պայմանագրերի կատարումը վերահսկող 9 մարմին կա: Տասներորդը՝ **Հարկադրական անհետացումից պաշտպանության հարցերով կոմիտեն**, կստեղծվի Բոլոր մարդկանց հարկադրական անհետացումից պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո:

Գործող կոմիտեներն են.

- **HRC - Մարդու իրավունքների կոմիտե** (վերահսկում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (1966 թ.) և դրան կից 2 կամընտիր արձանագրությունների (1966 թ. և 1989 թ.) կենսագործումը): Մարդու իրավունքների կոմիտեն հիմնվել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 28-րդ հոդվածի համաձայն: Այն կոչված է վերահսկելու մասնակից պետությունների պարտավորությունների համապատասխանությունը դաշնագրի դրույթներին՝ քննության առնելով մասնակից պետությունների ներկայացրած զեկույցները և դաշնագրի դրույթների՝ վերջիններիս կողմից թույլ տրված խախտումների մասին անհատական հաղորդագրությունները: Դաշնագրի համաձայն՝ մասնակից պետությունները պարբերաբար՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ, պետք է զեկույցներ ներկայացնեն կոմիտեին: Երկու-երեք դռնբաց միստերում զեկույցը քննարկելուց հետո կոմիտեն դռնփակ միստում ամփոփում է իր դիտողություններն ու հանձնարարականներ ներկայացնում

⁶ Տես նաև Հավելված 2: Առավել մանրամասն՝ <http://www2.ohchr.org/english/bodies/treaty/index.htm>:

պետությանը, որոնք հավասարազոր են միջազգային դատարանների դատավճիռներին:

- **CESCR - Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտե** (վերահսկում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (1966 թ.) և դրան կից կամընտիր արձանագրության (2008 թ.) կենսագործումը): Սկզբնական շրջանում, համաձայն Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 16-րդ հոդվածի, պետությունների կողմից դաշնագրի կենսագործման վերահսկումը դրված էր Տնտեսական և սոցիալական խորհրդրդի վրա, որը հետագայում իր այդ պատասխանատվությունը փոխանցեց այդ նպատակով ստեղծված Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին: Մասնակից պետությունները պարտավորվում են 5 տարին մեկ անգամ պարբերական զեկույց ներկայացնել դաշնագրով ճանաչվող իրավունքների ապահովման ասպարեզում իրենց կողմից ձեռնարկված միջոցների և արձանագրված առաջընթացի մասին: Ջեկույցներում զետեղված տվյալները քննության առնելուց հետո կոմիտեն ամփոփում է իր դիտողությունները և հանձնարարականներ ներկայացնում պետությանը՝ վերջինիս ուշադրությունը հրավիրելով ձախողված ընթացակարգերի վրա:
- **CERD - Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտե** (վերահսկում է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի (1965 թ.) կենսագործումը): Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտեն ստեղծվել է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն: Կոմիտեն կոչված է վերահսկելու կոնվենցիայի դրույթների կենսագործումը և օժանդակելու դրան: Մասնակից պետությունները պարտավորվում են երկու տարին մեկ անգամ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի միջոցով կոմիտեի քննարկմանը ներկայացնել պարբերական զեկույց, որում պետք է շարադրվեն կոնվենցիայի դրույթների կենսագործման նպատակով ձեռնարկված օրենսդրական, դատական, վարչական կամ այլ մի-

ջոցները: Յուրաքանչյուր զեկույց ներկայացվում է կոմիտեի՝ տվյալ երկրի հարցով զեկուցող նշանակված անդամի ուշադրությանը և մանրամասն վերլուծությանը: Եթե հինգ տարին լրանալուց հետո պետությունը զեկույց չի ներկայացնում, կոմիտեն իրավագոր է քննել երկրի իրավիճակը՝ առանց զեկույցի:

- **CEDAW - Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտե** (վերահսկում է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (1979 թ.) և դրան կից կամընտիր արձանագրության (1999 թ.) իրագործումը): Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեն ստեղծվել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն: Կոմիտեի հիմնական գործառույթը կոնվենցիայի դրույթների կենսագործումն է՝ մասնակից պետությունների ներկայացրած պարբերական զեկույցների հիման վրա: Նոր կամընտիր արձանագրության համաձայն ստեղծվել է երկու ընթացակարգ.

ա. անհատական հաղորդագրությունների ընթացակարգ, որը թույլ կտա հաղորդագրություններ ներկայացնել այն անհատների կամ անհատների խմբի անունից, ովքեր հայտարարում են, թե կոնվենցիայի այս կամ այն դրույթի խախտման գոհ են դարձել,

բ. ընթացակարգ, որը կոմիտեին հնարավորություն կտա հետաքննություն անցկացնելու մասնակից պետությունների կողմից այդ իրավունքների պարբերական խախտումների վերաբերյալ:

- **CAT - Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով կոմիտե** (վերահսկում է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի (1984 թ.) կենսագործումը): Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով կոմիտեն ստեղծվել է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն: Ըստ այդմ՝ մասնակից պետությունը 4 տարին մեկ անգամ պարբերական զեկույց է ներկայացնում կոմիտեին: Եթե վերջինս հավաստի տեղեկություններ է ստանում պե-

տությունում «խոշտանգումների պարբերական կիրառման» մասին և գտնում է, որ ստացված տեղեկությունն «արժանի է» հետագա քննության, ապա կոմիտեն լիազորվում է գաղտնի հետաքննություն անցկացնել, որին մասնակցելու է հրավիրվում նաև շահագրգիռ պետությունը: Ստացված տվյալների և տեղեկությունների հիման վրա կոմիտեն իր հանձնարարականներն է հղում պետությանը:

- **SPT - Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով ենթակոմիտեն** (վերահսկում է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության (2002 թ.) կենսագործումը): Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով ենթակոմիտեն, համաձայն կամընտիր արձանագրության, իրավունք ունի այցելելու մասնակից երկրների ոստիկանատներ, բանտեր (ռազմական ու քաղաքացիական), կալանավայրեր, հոգեբուժարաններ ու սոցիալական խնամքի վայրեր և ուսումնասիրելու այդ վայրերում պահվող մարդկանց վիճակը: Արձանագրության մասնակից երկրները պարտավոր են ստեղծել ներպետական անկախ կանխարգելիչ մեխանիզմներ՝ տեղերում խոշտանգումները բացառելու համար:
- **CRC - Երեխայի իրավունքների հարցերով կոմիտե** (վերահսկում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (1989 թ.) և դրան կից 2 կամընտիր արձանագրությունների (2000թթ.) կենսագործումը): Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն ստեղծվել է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 42-րդ հոդվածի համաձայն: Այն կոչված է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, մասնագիտացված գործակալությունների և իրավասու մարմինների հետ համատեղ, պետությունների պարբերական զեկույցների քննության հիման վրա իրականացնելու կոնվենցիայի դրույթների կենսագործման վերահսկումը: Ըստ այդմ, մասնակից պետությունները պարտավորվում են ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի միջոցով կոմի-

տեղի քննարկմանը պարբերական զեկույցներ ներկայացնել համա-
նուն կոնվենցիայով երաշխավորվող իրավունքների կենսագործ-
ման ուղղությամբ իրենց ձեռնարկած միջոցների և այդ բնագավա-
ռում արձանագրած առաջընթացի մասին:

- **CMW - Միգրանտ աշխատողների հարցերով կոմիտե** (վերահսկում է Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամ-
ների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի (1990
թ.) կենսագործումը): Մասնակից պետությունները պարտավորվում
են հինգ տարին մեկ անգամ զեկույց ներկայացնել տվյալ պետու-
թյունում կոնվենցիայի կենսագործման ուղղությամբ իրենց ձեռնար-
կած քայլերի մասին: Ջեկույցներում պետք է նշվեն կոնվենցիայի
կենսագործման ընթացքում առաջացած խոչընդոտները և տեղե-
կատվություն տրամադրվի միգրացիոն հոսքերի մասին: Ջեկույց-
ներն ուսումնասիրելուց հետո կոմիտեն տվյալ մասնակից պետու-
թյանը համապատասխան հանձնարարականներ է ներկայացնում:
- **CRPD - Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հար-
ցերով կոմիտե** (վերահսկում է Հաշմանդամություն ունեցող ան-
ձանց իրավունքների մասին միջազգային կոնվենցիայի (2006 թ.) և
դրան կից կամընտիր արձանագրության (2006 թ.) կենսագործու-
մը): Մասնակից պետությունները պարտավոր են Հաշմանդամու-
թյուն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին պար-
բերական զեկույցներ ներկայացնել կոնվենցիային միանալուց եր-
կու տարի անց, այնուհետ՝ չորս տարին մեկ անգամ: Կոմիտեն նոր
է ստեղծվել և սկսել աշխատանքները (2009 թ.) և դեռևս կարող է
փոփոխությունների ենթարկվել:

Պայմանագրային մեխանիզմներով վերահսկվում է մարդու իրավունք-
ների դաշտին վերաբերող հիմնական միջազգային պայմանագրերի
կենսագործումը: Ստեղծված տարբեր կոմիտեները կազմված են ան-
կախ փորձագետներից, ովքեր հանդես են գալիս անհատապես, այլ ոչ
որպես իրենց կառավարությունների ներկայացուցիչներ, թեև ընտր-
վում են մասնակից պետությունների ներկայացուցիչների կողմից: Ան-
դամներն ընտրվում են աշխարհագրական արդարացի բաշխման
սկզբունքով՝ այդպիսով երաշխավորելով հավասարակշիռ ներկայաց-

վածությունը և իրազեկվածությունը հիմնական իրավական համակարգերում:

Պայմանագրերի կատարումը վերահսկող մարմինների հիմնական գործառույթներն են՝ մասնակից պետությունների ներկայացրած զեկույցներն ուսումնասիրելը և մարդու իրավունքների խախտումների մասին գանգատները քննության առնելը:

Պայմանագրային մարմինների կազմը

Պայմանագրային մարմինը	Ստեղծման տարեթիվը	Կազմը	Հանդիպումները
HRC	1977 թ.	18 անդամ՝ չորս տարի ժամկետով	Ժնևում կամ Նյու Յորքում՝ տարեկան 3 նստաշրջան
CESCR	1985 թ.	18 անդամ՝ չորս տարի ժամկետով	Ժնևում՝ տարեկան 2 նստաշրջան
CERD	1971 թ.	18 անդամ՝ չորս տարի ժամկետով	Ժնևում՝ տարեկան 2 նստաշրջան
CEDAW	1982 թ.	23 անդամ՝ չորս տարի ժամկետով	Ժնևում կամ Նյու Յորքում՝ 2-3 նստաշրջան
CAT	1988 թ.	10 անդամ՝ չորս տարի ժամկետով	Ժնևում՝ տարեկան 2 նստաշրջան և 1 աշխատանքային հանդիպում
SPT	2007 թ.	10 անդամ՝ չորս տարի ժամկետով	Ժնևում՝ տարեկան 3 նստաշրջան
CRC	1991 թ.	18 անդամ՝ չորս տարի ժամկետով	Ժնևում՝ տարեկան 3 նստաշրջան
CMW	2004 թ.	14 անդամ՝ չորս տարի ժամկետով	Ժնևում՝ տարեկան 2 նստաշրջան
CRPD	2009 թ.	12 (18) անդամ՝ 4 տարի ժամկետով ⁷	Ժնևում՝ տարեկան 2 նստաշրջան

⁷ Կոմիտեն նոր է ձևավորվել. կազմը ենթակա է համալրման:

- Ջեկույց ներկայացնող պետությունը

Միջազգային պայմանագրերի մասնակից բոլոր պետությունները պարտավոր են զեկույց ներկայացնել համապատասխան պայմանագրում ամրագրված իրավունքների իրականացման գործում ունեցած առաջընթացի և այդ ասպարեզում ծագած խնդիրների մասին⁸:

- Անհատական գանգատներ

Միջազգային պայմանագրերից չորսն անհատներին իրավունք են տալիս գանգատ ներկայացնելու վկայակոչված իրավունքների խախտումների մասին (Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրություն, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, Խոշտանգումների և այլ դաժան, անարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն):

- Մի պետության կողմից մեկ այլ պետության դեմ ներկայացվող գանգատները

Վերը թվարկված չորս պայմանագրերը, ինչպես նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան նախատեսում են նաև, որ մասնակից պետությունները կարող են մարդու իրավունքների հետ կապված չարաշահումների վերաբերյալ գանգատ ներկայացնել մեկ այլ մասնակից պետության դեմ:

Պայմանագրերի հատուկ դրույթների մեկնաբանումներ կարելի է գտնել գանգատների վերաբերյալ «կարծիքներում», ինչպես նաև՝ պետությունների ներկայացրած զեկույցների առնչությամբ ընդունված

⁸ Հայաստանի Հանրապետության ներկայացրած զեկույցները Պայմանագրային մարմիններին՝ տե՛ս հավելված 4-ում:

«Եզրափակիչ դիտողություններում» կամ «Եզրափակիչ մեկնաբանություններում»: Բացի այդ, պայմանագրերը վերահսկող մարմինները ձևակերպում և ընդունում են «ընդհանուր դիտողություններ» և «ընդհանուր հանձնարարականներ», որոնց միջոցով ներկայացնում են տարբեր հարցերի վերաբերյալ իրենց մոտեցումներն ու փորձը: Ներկայումս գոյություն ունեն մեծ թվով ընդհանուր մեկնաբանություններ և հանձնարարականներ, որոնք ծառայում են իբրև պայմանագրերի մեկնաբանման արժեքավոր աղբյուրներ:

3. Մարդու իրավունքների խորհուրդը

3.1. Ի՞նչ է Մարդու իրավունքների խորհուրդը

Մարդու իրավունքների հանձնաժողովից անցում Մարդու իրավունքների խորհրդին

Մարդու իրավունքների խորհուրդը, որը Գլխավոր ասամբլեայի թիվ 60/251 բանաձևի համաձայն հիմնադրվել է 2006 թ. մարտի 15-ին, ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների համար պատասխանատու միջկառավարական գլխավոր կառույցն է։ Այն փոխարինել է Մարդու իրավունքների հանձնաժողովին, որն ավելի քան 60 տարի համարվում էր Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների համակարգի առանցքը։ Վերջին անգամ Հանձնաժողովը նիստ գումարել է 2006 թ. մարտին՝ իր 62-րդ նստաշրջանի ժամանակ։ Նորմատիվների և չափանիշների ստեղծման ասպարեզում Հանձնաժողովի ձեռքբերումները հիմք են ապահովում Խորհրդի աշխատանքի համար։

Հանձնաժողովը Տնտեսական և սոցիալական խորհրդի (Տնտոսց-խորհ/ECOSOC) ենթադաս մարմին էր, մինչդեռ Մարդու իրավունքների խորհուրդը Գլխավոր ասամբլեայի ենթադաս մարմին է։ Կարգավիճակի այս բարձրացումն ընդգծում է, որ մարդու իրավունքների խնդիրը Միավորված ազգերի կազմակերպության երեք էական հիմնապյուններից մեկն է՝ զարգացման և խաղաղության ու անվտանգության հետ միասին։ Խորհրդի ստեղծմամբ մաս հաստատվում է Գլխավոր ասամբլեայի պատրաստակամությունը ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ամրապնդման հարցում նպատակ ունենալով ապահովել, որ բոլոր մարդիկ փաստացի օգտվեն քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից, ներառյալ՝ զարգացման իրավունքից։

Իր թիվ 60/251 բանաձևում Գլխավոր ասամբլեան Մարդու իրավունքների խորհրդին հանձնարարեց վերանայել և անհրաժեշտության դեպքում կատարելագործել ու բարելավել Հանձնաժողովից ժառանգած բոլոր լիազորությունները, մեխանիզմները, գործառույթներն ու պարտականությունները։ Խորհրդի առջև պարտավորություն դրվեց՝ այս հանձնարարականն իրականացնել իր առաջին նստաշրջանի գումա-

րումից հետո մեկ տարվա ընթացքում: Խորհրդից պահանջվում էր նաև, որպեսզի աշխատանքի մեթոդները՝

- լինեն թափանցիկ, արդար և անկողմնակալ,
- միտված լինեն արդյունքներին հասնելուն,
- ընձեռեն անկեղծ երկխոսության հնարավորություն,
- իր հանձնարարականների և դրանց իրականացման վերաբերյալ հետագա քննարկումների հնարավորություն տան, և
- տան Խորհրդի մեխանիզմների հետ բովանդակային փոխգործակցության հնարավորություն:

Մարդու իրավունքների խորհրդի՝ որպես ինստիտուտի կայացման փաթեթը (բանաձև թիվ 5/1)

2007 թ. հունիսի 18-ին՝ իր առաջին հավաքից մեկ տարի անց և որպես ինստիտուտ կայանալու արագացված փուլից հետո, Խորհուրդը հավանություն տվեց իր ընթացակարգերը, մեխանիզմներն ու կառուցվածքները սահմանող փաթեթին: Փաթեթը, որն ընդունվեց որպես Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհրդի՝ որպես ինստիտուտի կայացման մասին թիվ 5/1 բանաձև, ներառում էր.

- նոր օրակարգը և աշխատանային ծրագրի շրջանակը.
- աշխատանքի նոր մեթոդները և ընթացակարգային նոր կանոններ՝ հիմնված Գլխավոր ասամբլեայի կոմիտեների համար նախատեսված կանոնների վրա.
- բողոքների ներկայացման մեխանիզմը (որը փոխարինեց թիվ 1503 ընթացակարգին).
- մարդու իրավունքների խորհրդի Խորհրդատվական կոմիտեն (որը փոխարինեց Մարդու իրավունքների քարոզման և պաշտպանության ենթահանձնաժողովին).

- սկզբունքներ, գործընթացներ և աշխատանքային մոդելներ՝ ուղղորդելու պարբերական համապարփակ դիտարկման նոր մեխանիզմի աշխատանքը.
- հատուկ ընթացակարգերի մանդատների պարբերական վերանայման, արդյունավետության բարձրացման և կատարելագործման չափանիշները:

3.2. Ինչպե՞ս են գործում Մարդու իրավունքների խորհուրդը և խորհրդի մեխանիզմներն ու մանդատները

Անդամակցությունը

Մարդու իրավունքների խորհուրդը կազմված է 47 անդամ պետություններից, որոնք Փխավոր ասամբլեայի կողմից ուղղակի և առանձին-առանձին ընտրվում են գաղտնի քվեարկությամբ: Անդամ պետություններ ընտրելիս հարկ է հաշվի առնել թեկնածու պետությունների գրանցած արդյունքները մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում և նրանց կամավոր ստանձնած պարտավորություններն ու հանձնառությունները: Խորհրդի անդամ պետություններն ընտրվում են երեք տարի ժամկետով և իրար հաջորդող երկու ժամկետների ավարտից հետո վերընտրվելու իրավունք չունեն:

Եթե Խորհրդի անդամ պետությունը թույլ է տալիս մարդու իրավունքների կոպիտ և պարբերական բնույթ կրող ոտնահարումներ, Փխավոր ասամբլեան, ներկա քվեարկող անդամների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ կարող է որոշում կայացնել՝ ժամանակավորապես դադարեցնելու այդ պետության անդամակցությունը Խորհրդին:

Հանդիպումները

Ի տարբերություն նախկին Հանձնաժողովի, որը հանդիպում էր տարեկան միայն մեկ անգամ՝ վեց շաբաթ ընդհանուր տևողությամբ, Խորհուրդը շվեյցարական Ժնև քաղաքի Ազգերի պալատում հանդիպում է տարեկան առնվազն երեք լիազումար նստաշրջաններով՝ առնվազն 10 շաբաթ ընդհանուր տևողությամբ: Խորհրդի հիմնական (չորսշաբաթյա) նստաշրջանը սովորաբար անց է կացվում մարտ ամսին:

Խորհուրդն անդամ պետության պահանջով կարող է անցկացնել նաև հատուկ նիստեր, եթե այդ պահանջն ստանում է Խորհրդի անդամ պետությունների ամրվազն մեկ երրորդի աջակցությունը:

Խորհուրդը նաև կազմակերպում է թեմատիկ քննարկումներ և հատուկ միջոցառումներ՝ որոշակի հարցերի շուրջ երկխոսությունը և փոխըմբռնումը խորացնելու նպատակով:

3.3 Մարդու իրավունքների խորհրդի լիազորություններն ու մեխանիզմները

Ա. Պարբերական համապարփակ դիտարկում

Բ. Մարդու իրավունքների խորհրդի խորհրդատվական կոմիտե

Գ. Բողոքների ներկայացման ընթացակարգ

Դ. Հատուկ ընթացակարգեր

Ե. Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խմբեր

Զ. Սոցիալական ֆորում

Է. Փոքրամասնությունների հարցերով ֆորում

Ը. Տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների հարցով փորձագիտական մեխանիզմ

Ա. Պարբերական համապարփակ դիտարկում

Պարբերական համապարփակ դիտարկումը *«հսկայական ներուժ ունի աշխարհի ամենամութ անկյուններում մարդու իրավունքները քարոզելու և պաշտպանելու համար»*, - *նշել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-Մունը:*

Պարբերական համապարփակ դիտարկումը (ՊՀԴ/UPR) մի եզակի գործընթաց է, որի շրջանակներում ՄԱԿ-ի անդամ բոլոր 192 պետություններում քառամյակը մեկ անգամ իրականացվում է մարդու իրավունքների վիճակի դիտարկում: ՊՀԴ-ն Մարդու իրավունքների խոր-

հըրդի հովանու ներքո, պետությունների հետ համաձայնեցվող գործընթաց է, որը յուրաքանչյուր պետության հնարավորություն է տալիս բարձրաձայնելու, թե ինչ քայլեր են ձեռնարկվել մարդու իրավունքների պաշտպանության վիճակն իրենց երկրում բարելավելու և մարդու իրավունքների վերաբերյալ իրենց ստանձնած պարտավորությունները կատարելու ուղղությամբ: ՊՀ-ն մշակվել է, որպեսզի հավասար վերաբերմունք ապահովի յուրաքանչյուր երկրի նկատմամբ՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում տիրող իրադրությունը գնահատելիս, որպես Մարդու իրավունքների խորհրդի հիմնական հատկանիշներից մեկը:

ՊՀ-ն ստեղծվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից՝ 2006 թ. մարտի 15-ին ընդունած թիվ 60/251 բանաձևով, որով ստեղծվել է նաև Մարդու իրավունքների խորհուրդը: ՊՀ-ն գործակցային մի ժամանակահատված է, որի շրջանակներում մինչև 2011 թ. պետք է դիտարկվեն երկրներից յուրաքանչյուրում մարդու իրավունքների ոլորտում գրանցված արդյունքները: Ներկայումս գոյություն չունի նմանատիպ որևէ այլ համապարփակ մեխանիզմ:

ՊՀ-ն նոր խորհրդի առանցքային բաղադրիչներից է, որը պետություններին հիշեցնում է մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները լիարժեքորեն հարգելու և կենսագործելու իրենց պարտավորության մասին: Այս նոր մեխանիզմի վերջնական նպատակն է՝ բարելավել մարդու իրավունքների պաշտպանության վիճակը բոլոր երկրներում և անդրադառնալ մարդու իրավունքների ոտնահարումներին՝ որտեղ էլ դրանք տեղի ունենան:

Ո՞րն է ՊՀ-ի նպատակը

ՊՀ-ի վերջնական նպատակը մարդու իրավունքների պաշտպանության վիճակի բարելավումն է յուրաքանչյուր երկրում, ինչը նշանակալի հետևանքներ կունենա ամբողջ աշխարհի մարդկության համար: ՊՀ-ն ձևավորվել է՝ տեղերում մարդու իրավունքների քարոզումն ու պաշտպանությունը խթանելու, սատարելու և ընդլայնելու նպատակով: Սրան հասնելու համար ՊՀ-ն ներառում է պետությունների կողմից մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում գրանցած

արդյունքների գնահատումը և անդրադարձը մարդու իրավունքների ոտնահարման ցանկացած դեպքի՝ որտեղ էլ այն տեղի ունենա:

ՊՀԴ-ի խնդիրն է նաև՝ տեխնիկական օժանդակություն տրամադրել պետություններին և բարելավել նրանց կարողությունները՝ մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող մարտահրավերներին արդյունավետ դիմագրավելու և պետությունների ու շահագրգիռ այլ կողմերի շրջանում ձեռքբերված լավագույն փորձը տարածելու հարցերում:

Ե՞րբ են ՊՀԴ-ի միջոցով քննության առնվելու մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում պետությունների գրանցած արդյունքները

ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունները քննության են ենթարկվելու յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ. ամեն տարի դիտարկման է ենթարկվելու 48 պետություն: Խորհրդի բոլոր 47 անդամները քննության ենթարկվելու են իրենց անդամության ժամանակաընթացքում: 2007 թ. սեպտեմբերի 21-ին Մարդու իրավունքների խորհուրդը հաստատեց մի ժամանակացույց, որը սահմանում է այն հերթականությունը, որով ՊՀԴ-ի առաջին քառամյա շրջափուլում (2008-2011 թթ.) քննության կենթարկվեն ՄԱԿ-ի անդամ 192 պետությունները: Դիտարկումները տեղի կունենան ՊՀԴ աշխատանքային խմբի նստաշրջանների ընթացքում: Խումբը հանդիպելու է տարեկան երեք անգամ:

Ո՞վ է իրականացնում դիտարկումը

Դիտարկումներն իրականացվում են ՊՀԴ աշխատանքային խմբի կողմից, որը կազմված է Խորհրդի 47 անդամներից: Այսուհանդերձ, ՄԱԿ-ի անդամ ցանկացած պետություն կարող է մասնակցել քննության ենթարկվող պետությունների հետ քննարկումներին ու երկխոսությանը: Դիտարկումն իրականացվում է երեք պետություններից կազմված խմբերի օժանդակությամբ, որոնք հայտնի են «եռյակներ» անվամբ. դրանք հանդես են գալիս որպես զեկուցողներ: Յուրաքանչյուր պետության քննության համար «եռյակների» ընտրությունը կատարվում է Աշխատանքային խմբի յուրաքանչյուր նստաշրջանից առաջ հայտեր ընդունելու միջոցով:

Ինչի՞ վրա են հիմնվում դիտարկումները

Փաստաթղթերը, որոնց վրա հենվում են դիտարկումները, հետևյալն են.

- 1) դիտարկման ենթարկվող պետության կողմից ներկայացված տեղեկություններ, որոնք կարող են տրամադրվել **«ազգային զեկույցի»** ձևով.
- 2) տեղեկություններ, որոնք պարունակվում են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի անկախ փորձագետների և խրմբերի զեկույցներում. դրանք հայտնի են որպես **«Հատուկ ընթացակարգեր»**, տեղեկություններ մարդու իրավունքների պայմանագրային կառույցներից և ՄԱԿ-ի այլ միավորներից.
- 3) տեղեկություններ շահագրգիռ այլ կողմերից, ներառյալ ոչ կառավարական կազմակերպությունները և մարդու իրավունքների պաշտպանության ներպետական հաստատությունները:

Ինչպե՞ս են անցկացվում դիտարկումները

Դիտարկումները տեղի են ունենում քննվող պետության և ՄԱԿ-ի անդամ այլ պետությունների միջև ինտերակտիվ քննարկման միջոցով: Սա կատարվում է ՊՀԴ աշխատանքային խմբի հանդիպման ժամանակ: Այս քննարկման ընթացքում ՄԱԿ-ի անդամ ցանկացած պետություն կարող է քննության ենթարկվող պետությանն առաջադրել հարցեր, մեկնաբանություններ և/կամ առաջարկություններ: «Եռյակները» կարող են խմբավորել քննության ենթարկվող պետությանը ներկայացվելիք խնդիրները կամ հարցերը, որպեսզի ապահովեն ինտերակտիվ երկխոսության սահուն և կարգապահ ընթացքը: Աշխատանքային խրմբում յուրաքանչյուր երկրի դիտարկում պետք է տևի երեք ժամ:

Արդյո՞ք ոչ կառավարական կազմակերպությունները (ՈԿԿ-ներ) կարող են մասնակցել ՊՀԴ ընթացքին

Այո: ՈԿԿ-ները կարող են ներկայացնել տեղեկություններ, որոնք կարող են լրացնել **«շահագրգիռ այլ կողմերի զեկույցը»**, որն ուսումնասիրվում է քննության ընթացքում: Նրանց տրամադրած տեղեկություններ

րին կարող է հղում կատարել Աշխատանքային խմբի հանդիպման ինտերակտիվ քննարկումներին մասնակցող պետություններից յուրաքանչյուրը: ՈԿԿ-ները կարող են ներկա գտնվել ՊՀԴ Աշխատանքային խմբի նստաշրջաններին և կարող են հայտարարություններ անել Մարդու իրավունքների խորհրդի լիազումար նիստում, երբ քննարկվում են պետությունների քննությունների արդյունքները:

Մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված ինչպիսի՞ պարտավորություններ են քննվում

ՊՀԴ-ն գնահատում է, թե որքանով են պետությունները կատարում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող իրենց պարտավորությունները, որոնք ամրագրված են.

- 1) ՄԱԿ-ի Կանոնադրությունում,
- 2) Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում,
- 3) մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ այն փաստաթղթերում, որոնց միացել է տվյալ պետությունը (մարդու իրավունքների մասին պայմանագրեր, որոնք վավերացրել է դիտարկվող պետությունը),
- 4) տվյալ պետության՝ կամավոր ստանձնած պարտավորություններում ու հանձնառություններում⁹ (օրինակ՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող ազգային քաղաքականությունը և/կամ ծրագրերը), և
- 5) կիրառելի միջազգային հումանիտար իրավունքում:

Դիտարկումից ակնկալվող արդյունքը

Աշխատանքային խմբի կողմից տվյալ պետության դիտարկմանը հետևում է մի գեկույց, որը պատրաստվում է «եռյակի» կողմից՝ դիտարկման ենթարկված պետության ներգրավմամբ և Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի աջակցությամբ: Այդ գեկույ-

⁹ Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կամավոր ստանձնած պարտավորություններն ու հանձնառությունները տե՛ս էջ 68:

ցը, որն անվանում են «արդյունքների մասին զեկույց», ներկայացնում է փաստացի քննարկման ամփոփագիրը: Այսինքն, այն բաղկացած է դիտարկման ենթարկված երկրին մյուս պետությունների կողմից տրված հարցերից, մեկնաբանություններից և առաջարկություններից, ինչպես նաև քննվող պետության պատասխաններից:

Ինչպե՞ս է հաստատվում դիտարկման զեկույցը

Աշխատանքային խմբի նիստում կես ժամ հատկացվում է այդ նստաշրջանում դիտարկման ենթարկված պետություններից յուրաքանչյուրի **«արդյունքների մասին զեկույցները»** հաստատելուն: Սա տեղի է ունենում ոչ շուտ, քան երկրի դիտարկումից 48 ժամ անց: Քննության ենթարկված պետությունը հնարավորություն է ստանում նախնական մեկնաբանություններ անելու առաջարկությունների վերաբերյալ՝ որոշելով կա՛մ ընդունել, կա՛մ մերժել դրանք: Թե՛ ընդունված, և թե՛ մերժված առաջարկությունները ներառվում են զեկույցում: Ջեկույցի հաստատումից հետո պետություններին հնարավորություն է տրվում երկու շաբաթվա ընթացքում հայտարարությունների միջոցով խմբագրական շտկումներ կատարելու զեկույցում: Այնուհետ զեկույցը պետք է ընդունվի Մարդու իրավունքների խորհրդի լիազումար նիստում:

Լիազումար նիստի ընթացքում դիտարկվող պետությունը կարող է պատասխանել հարցերին և անդրադառնալ այն խնդիրներին, որոնք բավարար ուշադրության չեն արժանացել Աշխատանքային խմբի հանդիպման ժամանակ, և պատասխանել այն առաջարկություններին, որոնք քննության ընթացքում արվել են պետությունների կողմից: Ժամանակ է հատկացվում նաև անդամի և դիտորդի կարգավիճակ ունեցող պետություններին, եթե վերջիններս ցանկանում են իրենց կարծիքն արտահայտել քննության արդյունքի վերաբերյալ, ինչպես նաև ՈԿԿ-ներին և շահագրգիռ այլ կողմերի՝ ընդհանուր բնույթի մեկնաբանությունների համար:

Դիտարկմանն ի՞նչ քայլեր են հետևում

Պետությունն առաջնային պատասխանատվություն է կրում վերջնական առաջարկությունների կենսագործման համար: ՊՀԴ-ն ապահո-

վում է, որ բոլոր երկրները հաշվետու լինեն այդ առաջարկությունները կատարելու կամ դրանց կատարումը ձախողելու համար:

Երբ գալիս է տվյալ երկիրը երկրորդ անգամ քննության ենթարկելու ժամանակը, պետությունները պարտավոր են տեղեկություններ տրամադրել այն մասին, թե ինչ են արել չորս տարի առաջ իրականացված դիտարկման արդյունքում հնչած առաջարկությունները կենսագործելու համար:

Միջազգային հանրությունը կարող է աջակցել առաջարկությունների և եզրակացությունների կենսագործմանը կարողությունների զարգացման և տեխնիկական օժանդակության հարցերում՝ խորհրդակցելով խնդրո առարկա պետության հետ: Անհրաժեշտության դեպքում խորհուրդը կարող է դիտարկումն իրականացնել անգամ այն դեպքերում, երբ պետությունը հրաժարվում է համագործակցությունից:

Ի՞նչ է տեղի ունենում, երբ որևէ պետություն չի կատարում իր պարտավորությունները ՊՀԴ-ի նկատմամբ

Մարդու իրավունքների խորհուրդը կորոշի այն միջոցառումները, որոնք ստիպված կլինի ձեռնարկել, եթե որևէ երկիր շարունակաբար խուսափի ՊՀԴ-ի նկատմամբ իր ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Բ. Մարդու իրավունքների խորհրդի խորհրդատվական կոմիտե

Խորհրդատվական կոմիտեն Մարդու իրավունքների խորհրդի ենթադաս մարմիններից է: Այն փոխարինել է Մարդու իրավունքների հանձնաժողովի Մարդու իրավունքների քարոզման և պաշտպանության հարցերով ենթահանձնաժողովին և գործում է որպես խորհրդի գիտահետազոտական կենտրոն՝ հիմնականում կենտրոնանալով ուսումնասիրությունների և հետազոտությունների վրա հիմնված խորհրդատվության շուրջ՝ խորհրդի պահանջած եղանակով և ձևաչափով:

Զնայած խորհրդատվական կոմիտեն առանց խորհրդի լիազորման չի կարող բանաձևեր կամ որոշումներ ընդունել կամ ենթադաս մարմիններ ստեղծել, այն կարող է առաջարկներ անել խորհրդին՝

- սեփական ընթացակարգերի արդյունավետությունը բարձրացնելու և
- սեփական գործունեության սահմաններում հետազոտություններ իրականացնելու նպատակով:

Խորհրդատվական կոմիտեն բաղկացած է Միավորված ազգերի կազմակերպության տարածաշրջանային հինգ խմբերից (**Աֆրիկա, Ասիա, Արևելյան Եվրոպա, Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազանի երկրներ, Արևմտյան Եվրոպա և այլ պետություններ**) համամասնորեն ընտրված 18 փորձագետից, ովքեր պաշտոնավարում են եռամյա ժամկետով և միայն մեկ անգամ վերընտրվելու իրավունք ունեն: Խորհրդատվական կոմիտեն հանդիպում է տարեկան երկու նստաշրջանում՝ մինչև 10 աշխատանքային օր տևողությամբ, և Խորհրդի հաստատմամբ կարող է անցկացնել որոշակի հարցերի շուրջ լրացուցիչ նիստեր:

Գ. Մարդու իրավունքների խորհրդի՝ բողոքների ընդունման և դիտարկման ընթացակարգը

2007 թ. հունիսի 18-ին Մարդու իրավունքների խորհուրդն ընդունեց Խորհրդի նախագահի կողմից ներկայացված մի փաստաթուղթ, որը վերնագրված էր «ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդ. կազմակերպության ենթակառուցվածքի ստեղծումը» (բանաձև 5/1), որով հիմնվում էր բողոքների ներկայացման նոր ընթացակարգ՝ դիմակայելու համար աշխարհի ցանկացած կետում, ցանկացած հանգամանքներում մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների կոպիտ և ստույգ հաստատված խախտումների պարբերական դրսևորումներին:

Բողոքների ներկայացման նոր ընթացակարգը հաստատվել է համաձայն Գլխավոր ասամբլեայի թիվ 60/251 բանաձևով Մարդու իրավունքների խորհրդին 2006 թ. մարտի 15-ին տրված մանդատի: Այս բանաձևում Խորհրդից պահանջվում էր իր առաջին նստաշրջանից հետո մեկ տարվա ընթացքում վերանայել և, անհրաժեշտության դեպքում, բարելավել ու կատարելագործել նախկին Մարդու իրավունքների հանձնաժողովի բոլոր մանդատները (լիազորությունները), մեխա-

նիզմները, գործառույթները և պարտավորությունները, ներառյալ՝ թիվ 1503 ընթացակարգը՝ պահպանելու համար հատուկ ընթացակարգերի, փորձագիտական խորհրդատվության, և բողոքների ներկայացման համակարգը:

Թիվ 1503 ընթացակարգի վերանայում

Համաձայն Գլխավոր ասամբլեայի կողմից տրված մանդատի, Խորհուրդը 2006 թ. հունիսի 30-ին որոշեց ստեղծել Գլխավոր ասամբլեայի թիվ 60/251 բանաձևի (որոշում 1/104) 6-րդ պարբերության իրականացման հարցով Աշխատանքային խումբ՝ նախկին Մարդու իրավունքների հանձնաժողովի բոլոր մանդատները, մեխանիզմները, գործառույթները և պարտավորությունները, ներառյալ՝ թիվ 1503 ընթացակարգը վերանայելու, անհրաժեշտության դեպքում դրանք բարելավելու և կատարելագործելու վերաբերյալ հստակ առաջարկներ մշակելու նպատակով:

Աշխատանքային խումբը 2006 թ. նոյեմբերի 13-ից 24-ը, 2007 թ. փետրվարի 5-ից 16-ը և 2007 թ. ապրիլի 10-ից 27-ը գումարեց երեք պաշտոնական, տևողության առումով չսահմանափակված նիստեր: Բողոքների ներկայացման ընթացակարգին նվիրված հատվածը նախագահում էր Շվեյցարիայի մշտական ներկայացուցիչը, որին Խորհրդի նախագահը նշանակել էր որպես այս մեխանիզմի վերաբերյալ խորհրդակցությունները համակարգող պաշտոնյա:

Աշխատանքային խմբում և ոչ պաշտոնական խորհրդակցությունների զանազան շրջափուլերի ընթացքում քննարկումներն անցկացվում էին Համակարգողի կողմից նախապատրաստված և հետագայում վերանայված օրակարգի հիման վրա: Աշխատանքային խմբի վերջին նիստից հետո Համակարգողը Նախագահին ներկայացրեց վերջնական առաջարկ (A/HRC/5/15), որում առավելագույնս հաշվի էին առնվել խորհրդակցությունների մի քանի ամիսների ընթացքում արտահայտված տեսակետները՝ նպատակ ունենալով օժանդակել Խորհրդի ինստիտուցիոնալ կառուցվածքի վերաբերյալ 2007 թ. հունիսին ընդունվելիք վերջնական փաստաթղթի «Բողոքների ներկայացման ընթացակարգ» բաժնի նախագծի մշակմանը:

Ինչպես է գործում բողոքների ներկայացման ընթացակարգը

Խորհրդի կողմից ընդունված թիվ 5/1 բանաձևի համաձայն Բողոքների ներկայացման ընթացակարգը պահպանում է իր գաղտնի բնույթը՝ գործին առնչվող պետության հետ համագործակցությունը խթանելու նպատակով: Ընթացակարգը, ի թիվս այլ պահանջների, պետք է միտված լինի տուժածների շահերի պաշտպանությանը և իրականացվի ժամանակին:

Հիմնվում է երկու առանձին աշխատանքային խումբ՝ **Հաղորդումների հարցերով աշխատանքային խումբ** և **Իրավիճակների հարցերով աշխատանքային խումբ**, որոնք կունենան հաղորդումն ուսումնասիրելու և Խորհրդի ուշադրությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոպիտ և ստույգ հաստատված խախտումների պարբերական դրսևորումներին սևեռելու լիազորություն:

Ակնհայտ անհիմն և անանուն հաղորդումներն անտեսվում են Հաղորդումների հարցերով աշխատանքային խումբը նախագահողի և Քարտուղարության կողմից: Նախնական ընտրության փուլում չմերժված գրությունները փոխանցվում են գործին առնչվող պետությանը՝ հայտարարվող խախտումների վերաբերյալ վերջինիս տեսակետներն ստանալու նպատակով:

Հաղորդումների հարցերով աշխատանքային խումբը իր անդամների թվից նշանակում է Մարդու իրավունքների խորհրդի խորհրդակցական կոմիտե՝ երեք տարի ժամկետով (մանդատը կարող է նորացվել մեկ անգամ): Այն բաղկացած է հինգ անկախ և բարձր որակավորում ունեցող փորձագետներից և աշխարհագրորեն ներկայացուցչական է. դրանում ներկայացված են հինգ տարածաշրջանային խմբերը: Աշխատանքային խումբը հավաքվում է տարին երկու անգամ՝ հինգ աշխատանքային օր տևողությամբ՝ գնահատելու համար տվյալ հաղորդման ընդունելիությունը և նշանակալիությունը, ներառյալ այն, թե որքանով է այդ գրությունն ինքնին կամ այլ գրությունների համադրությամբ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոպիտ և ստույգ հաստատված խախտումների պարբերական դրսևորումներ բացահայտում: Ընդունելի համարված բոլոր գրությունները և առաջարկու-

թյուններն այդպիսով փոխանցվում են Իրավիճակների հարցերով աշխատանքային խմբին:

Իրավիճակների հարցերով աշխատանքային խումբը Խորհրդի անդամ պետությունների թվից կազմվում է տարածաշրջանային խմբերից՝ մեկ տարի ժամկետով (մանդատը կարող է նորացվել մեկ անգամ): Այն հանդիպում է տարին երկու անգամ՝ հինգ աշխատանքային օր տևողությամբ՝ քննարկելու համար Հաղորդումների հարցով աշխատանքային խմբի փոխանցած գրությունները, ներառյալ այդ կապակցությամբ պետությունների տված պարզաբանումները, ինչպես նաև այն իրավիճակները, որոնք Խորհուրդն արդեն քննության է առել՝ Բողոքների ներկայացման ընթացակարգի համաձայն:

Իրավիճակների հարցով աշխատանքային խումբը Հաղորդումների հարցով աշխատանքային խմբի տրամադրած տեղեկությունների և առաջարկությունների հիման վրա Խորհրդին ներկայացնում է գեկույց մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոպիտ և ստույգ հաստատված խախտումների պարբերական դրսևորումների առնչությամբ, ինչպես նաև առաջարկություններ՝ ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ:

Այնուհետև Խորհրդի հերթն է՝ որոշում կայացնելու իր ուշադրությանը ներկայացված յուրաքանչյուր իրավիճակի վերաբերյալ:

Որոշք են հաղորդումները քննության ընդունելու չափանիշները

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտմանն առնչվող գրությունն ընդունելի է համարվում, բացառությամբ այն դեպքերի երբ.

- այն ունի ակնհայտ քաղաքական դրդապատճառներ, և դրա առարկան չի համապատասխանում ՄԱԿ-ի կանոնադրությանը, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին և մարդու իրավունքների ոլորտում կիրառելի այլ փաստաթղթերի, կամ
- այն չի պարունակում հայտարարվող խախտումների փաստական նկարագրությունը, ներառյալ այն իրավունքների, որոնց խախտման մասին հայտարարվում է, կամ

- դրա շարադրանքը վիրավորական է: Այդուհանդերձ, այսօրինակ գրությունները կարող են դիտարկվել, եթե վիրավորական շարադրանքի շտկումից հետո դրանք համապատասխանում են ընդունելիության մնացյալ չափանիշներին, կամ
- գրությունը չի հանձնվել այն անձի կամ անձանց խմբի կողմից, ովքեր պնդում են, որ իրենք մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման զոհ են, կամ այնպիսի անձի կամ անձանց խմբի, այդ թվում՝ մարդու իրավունքների սկզբունքների համաձայն բարեխիղճ գործունեություն ծավալող ոչ առևտրային կազմակերպությունների կողմից, որոնք չեն առաջնորդվում քաղաքական դրդապատճառներով և հայտարարում են, որ տիրապետում են տվյալ խախտման վերաբերյալ ուղղակի և ստույգ տվյալների: Այդուհանդերձ, գրությունները չեն կարող անընդունելի համարվել սոսկ այն պատճառով, որ առանձին հեղինակի տիրապետած տվյալները չեն ստացվել «առաջին ձեռքից», պայմանով, որ դրանք ուղեկցվեն հստակ ապացույցներով, կամ
- այն ամբողջովին հիմնված է զանգվածային լրատվամիջոցներով սփռված տեղեկությունների վրա, կամ
- այն վերաբերում է այնպիսի գործի, որը երևան է հանում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոպիտ և ստույգ հաստատված խախտումների պարբերական դրսևորում, որը, սակայն, մարդու իրավունքների ոլորտում պայմանագրով նախատեսված մարմնի կողմից կամ Միավորված ազգերի կազմակերպության կամ տարածաշրջանային՝ բողոքների ընդունման և դիտարկման համանման ընթացակարգով արդեն իսկ դիտարկվել է, կամ
- կարգավորման ներպետական միջոցներն սպառված չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ պարզվում է, որ այդ միջոցները կարող էին անարդյունք կամ անհիմն ձգձգված լինել:

Մարդու իրավունքների ներպետական հաստատությունները կարող են ծառայել որպես մարդու իրավունքների խախտումների անհատական դեպքերի դեմ պայքարելու արդյունավետ միջոց, եթե դրանք հիմնված

են Ներպետական հաստատությունների կարգավիճակին առնչվող սկզբունքների (Փարիզյան սկզբունքներ) ուղենիշային դրույթների վրա և գործում են դրանց համաձայն, այդ թվում՝ քվազի-դատական իրավասության հետ կապված հարցերով:

Ո՞ր ուղարկել հաղորդումները

Խորհրդի՝ բողոքների ընթացակարգի քննությանն ուղարկվող գրությունները կարող են հասցեագրվել.

Human Rights Council and Treaties Division
Complaint Procedure
OHCHR-UNOG
1211 Geneva 10, Switzerland
Ֆաքս. (41 22) 917 90 11
Էլ-փոստ. CP@ohchr.org

Հաղորդումներ

Որոշ հատուկ ընթացակարգեր ուղղակիորեն միջամտում են կառավարությունների աշխատանքին՝ իրենց մանդատին համապատասխանող մարդու իրավունքների խախտումների հարցով այս կամ այն հայտարարության կապակցությամբ: Միջամտությունը կարող է վերաբերել մարդու իրավունքների՝ արդեն տեղի ունեցած կամ ընթացքի մեջ գտնվող խախտմանը, կամ այնպիսի խախտման, որի կատարման էական սպառնալիք կա: Գործընթացն, ընդհանուր առմամբ, ներառում է նամակի ուղարկումը գործին առնչվող կառավարությանը՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ և մեկնաբանություններ ստացված հայտարարության վերաբերյալ, և, անհրաժեշտության դեպքում, խնդրելով ձեռնարկել կանխարգելիչ քայլեր կամ հետաքննություն:

Միջամտելու որոշումն ընդունվում է հատուկ ընթացակարգի հանձնակատարի հայեցողությամբ և կախված է նրա կողմից հաստատված, ինչպես նաև Վարքականոնում շարադրված տարաբնույթ չափանիշներից: Չափանիշներն ընդհանուր առմամբ վերաբերում են աղբյուրի վստահելիությանը և ստացված տեղեկության հավաստիությանը, ներկայացված մանրամասներին և մանդատի շրջանակին: Այդուհանդերձ, հարկ է ընդգծել, որ կոնկրետ բողոքին արծագանքելու համար նախա-

տեսված չափանիշներն ու ընթացակարգը տարբեր են, ուստի անհրաժեշտ է ներկայացնել յուրաքանչյուր հատուկ ընթացակարգով սահմանված պահանջներին համապատասխանող գրություն:

Ստորև նշված նվազագույն տեղեկատվությունն անհրաժեշտ է ներկայացնել բոլոր հատուկ ընթացակարգերի պարագայում, որպեսզի հնարավոր լինի գնահատել հաղորդումը.

- ենթադրյալ տուժած(ներ)ի ինքնությունը հավաստող տվյալներ,
- խախտման ենթադրյալ իրականացնողների ինքնությունը հավաստող տվյալներ,
- գրությունը հանձնող անձի (անձանց) կամ կազմակերպության (կազմակերպությունների) ինքնությունը հավաստող տվյալներ (այս տեղեկության գաղտնիությունն ապահովվում է),
- միջադեպի կատարման ամսաթիվը և վայրը,
- հայտարարվող խախտման հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը:

Գործին առնչվող թեմատիկ մանդատներով կարող են պահանջվել հայտարարվող խախտմանը վերաբերող այլ մանրամասներ (օրինակ՝ տուժածի նախկին և ներկայիս կալանավայրը, տուժածին տրված բժշկական հավաստագիրը, հայտարարվող խախտման վերաբերյալ վկաների ինքնության պարզումը, իրավիճակի կարգավորման ուղղությամբ տեղում ձեռնարկված միջոցառումները և այլն):

Վիրավորական լեզվով գրված գրությունները, կամ այնպիսիք, որոնց դրդապատճառներն ակնհայտ քաղաքական են, չեն դիտարկվում: Գրությունները պետք է միջադեպի փաստերը և վերը հիշատակված կարևոր մանրամասները նկարագրեն հստակ և համառոտ: Գրությունները պետք է հիմնված չլինեն սոսկ մամուլի հրապարակումների վրա:

Յուրաքանչյուր հատուկ ընթացակարգի մանդատի և անհատական գրությունների ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունների հա-

մար կարելի է այցելել թեմատիկ մանդատների կամ ըստ երկրների մանդատների անհատական ինտերնետային էջեր¹⁰:

Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ բողոք ներկայացնելը

Անհատների՝ իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ միջազգային ատյաններ բողոքելու հնարավորությունն իրական իմաստ է հաղորդում մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերում ամրագրված իրավունքներին:

Գոյություն ունի մարդու իրավունքներով զբաղվող պայմանագրային մարմիններին մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերի դրույթների խախտումների առնչությամբ բողոքներ ներկայացնելու երեք հիմնական ընթացակարգ.

Անհատական հաղորդումներ, միջպետական բողոքներ¹¹ և հարցումներ

- **Անհատական հաղորդումներ**

Մարդու իրավունքներով զբաղվող պայմանագրային մարմիններից հինգը (Մարդու իրավունքների հարցերով կոմիտեն (CCPR), Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտեն (CERD), Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով կոմիտեն (CAT), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտեն (CEDAW) և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն (CRPD)) որոշակի հանգամանքներում կարող են անհատական բողոքներ կամ անհատներից ստացված գրություններ դիտարկել.

Մարդու իրավունքների հարցերով կոմիտեն կարող է դիտարկել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշ-

¹⁰ Մանրամասներ կարելի է գտնել

<http://www2.ohchr.org/english/bodies/chr/special/communications.htm> կայքէջում:

¹¹ Ոչ բոլոր կոմիտեներն ունեն այսօրինակ բողոքներ դիտարկելու իրավունք, և այստեղ մենք չենք դիտարկի միջպետական բողոքները:

նագրի Առաջին կամրնտիր արձանագրության մասնակից պետություններին վերաբերող անհատական գրությունները:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն կարող է դիտարկել Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի մասնակից պետություններին վերաբերող անհատական գրությունները:

Խոշտանգման դեմ պայքարի հարցերով կոմիտեն կարող է դիտարկել Խոշտանգումների դեմ կոնվենցիայի 22-րդ հոդվածով նախատեսված հայտարարությունն արած մասնակից պետություններին վերաբերող անհատական գրությունները:

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտեն կարող է դիտարկել Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 14-րդ հոդվածով նախատեսված հայտարարությունն արած մասնակից պետություններին վերաբերող անհատական գրությունները:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն կարող է դիտարկել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամրնտիր արձանագրության մասնակից պետություններին վերաբերող անհատական գրությունները:

Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիան ևս պարունակում է դրույթներ, որոնք թույլ են տալիս, որպեսզի անհատական գրությունները դիտարկվեն **Միգրանտ աշխատողների հարցերով կոմիտեի (CMW)** կողմից. այս դրույթներն ուժի մեջ կմտնեն 10 մասնակից պետությունների կողմից 77-րդ հոդվածով նախատեսված հայտարարությունն ընդունելու պահից:

Ո՞վ կարող է բողոք ներկայացնել

Ցանկացած անհատ, ով պնդում է, թե դաշնագրով կամ կոնվենցիայով նախատեսված իր իրավունքները ոտնահարվել են տվյալ պայմանագրի մասնակից պետության կողմից, կարող է հաղորդում ներկայացնել համապատասխան կոմիտե՝ պայմանով, որ այդ պետությունը ճանա-

չած լինի նման բողոքներ ստանալու՝ կոմիտեի իրավասությունը: Անհատների անունից բողոքներ կարող են ներկայացնել նաև երրորդ անձինք՝ այն դեպքերում, երբ այդ անհատները տվել են իրենց գրավոր համաձայնությունը, կամ այն դեպքերում, երբ նրանք ի վիճակի չեն նման համաձայնություն տալ:

- **Հարցումներ**

Խոշտանգման դեմ պայքարի հարցերով կոմիտեն և Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեն կարող են սեփական հայեցողությամբ հարցումներ նախաձեռնել, եթե ստացել են մասնակից պետության տարածքում կոնվենցիաների լուրջ կամ պարբերական բնույթ կրող խախտումների մասին հիմնավոր և հավաստի տեղեկություններ:

Ո՞ր պետությունները կարող են հարցումներ ստանալ

Հարցումներ կարելի է նախաձեռնել միայն այն մասնակից պետությունների առնչությամբ, որոնք ճանաչել են տվյալ խնդրի վերաբերյալ համապատասխան կոմիտեի իրավասությունը: CAT-ի մասնակից պետությունները կոնվենցիան վավերացնելու կամ կոնվենցիային միանալու ժամանակ կարող են հրաժարվել հարցումներին պատասխանելուց՝ 28-րդ հոդվածի հիման վրա հայտարարություն անելով: CEDAW-ի Կանընտիր արձանագրությանը միացած պետությունները նմանապես կարող են բացառել կոմիտեի իրավասությունը՝ 10-րդ հոդվածի ներքո հայտարարություն անելով:

Հարցումների ընթացակարգը

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածը և CEDAW-ի Կանընտիր արձանագրության 8-10-րդ հոդվածները սահմանում են հետևյալ հիմնական ընթացակարգը, որով համապատասխան կոմիտեն կարող է հրատապ հարցումներ նախաձեռնել.

1. Ընթացակարգը կարող է գործի դրվել, եթե Կոմիտեն հավաստի տեղեկություններ է ստացել այն մասին, որ Կոնվենցիայով ամրա-

գրված իրավունքները պարբերաբար ուսնահարվում են մասնակից պետության կողմից: CAT-ի դեպքում տեղեկությունները պետք է հիմնավորեն, որ մասնակից պետության տարածքում խոշտանգումների պրակտիկան կրում է պարբերական բնույթ, իսկ CEDAW-ի դեպքում տեղեկություններում պետք է մատնացույց արվեն մասնակից պետության կողմից Կոնվենցիայում ամրագրված իրավունքների կոպիտ կամ պարբերական բնույթ կրող խախտումները:

2. Առաջին հերթին պահանջվում է, որ Կոմիտեն մասնակից պետությանը համագործակցության հրավիրի տեղեկությունների քննության ընթացքում ներկայացնելով իր նկատառումները:
3. Կոմիտեն կարող է մասնակից պետության նկատառումների և ձեռքի տակ եղած, բողոքին առնչվող այլ տեղեկությունների հիման վրա որոշել՝ իր անդամներից մեկին կամ մի քանիսին պատվիրակել, որպեսզի վերջիններս գաղտնի հարցում իրականացնեն և անհապաղ զեկուցեն Կոմիտեին: CEDAW-ի ընթացակարգը, մասնավորապես, լիազորում է այցելել խնդրո առարկա պետության տարածք՝ երաշխիքների առկայության և պետության համաձայնության դեպքում:
4. Այնուհետ անդամների բացահայտում(ներ)ը քննվում են Կոմիտեի կողմից և փոխանցվում տվյալ մասնակից պետությանը՝ ցանկացած համապատասխան մեկնաբանությունների և առաջարկությունների հետ միասին:
5. CEDAW-ի ընթացակարգով սահմանվում է վեցամսյա վերջնաժամկետ, որի ընթացքում մասնակից պետությունը պետք է ներկայացնի սեփական նկատառումները: Այն դեպքերում, երբ Կոմիտեն հրավիրում է տվյալ պետությանը, վերջինս պետք է տեղեկացնի հարցմանն ի պատասխան ձեռնարկված միջոցառումների մասին:
6. Կոմիտեն մասնակից պետության հետ խորհրդակցության արդյունքում կարող է որոշել՝ քննության արդյունքների ամփոփ նկարագրությունը ներառել իր տարեկան զեկույցում:

Երկու դեպքում էլ ընթացակարգը գաղտնի է, և ամբողջ ընթացքում պետք է ձգտել համագործակցության տվյալ մասնակից պետության հետ:

Դ. Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերը

Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հրատապ դիմումներ և նամակ-հայտարարություններ

Հատուկ ընթացակարգերում ներգրավված են տարբեր կերպ անվանվող մի շարք փորձագետներ, մասնավորապես՝ հատուկ զեկուցողներ, հատուկ ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ կամ աշխատանքային խմբեր՝ լիազորված Մարդու իրավունքների խորհրդի կողմից:

Չնայած հատուկ ընթացակարգերում ընդգրկված անձանց անվանումների տարբերությանը, նրանց ընդհանուր պարտականությունների և աշխատանքի մեթոդների միջև էական տարբերություններ չկան¹²: Փորձագետներն օժտված են ուսումնասիրելու, մշտադիտարկելու, խորհրդատվություն տրամադրելու և որոշակի երկրներում մարդու իրավունքների իրավիճակի կամ ամբողջ աշխարհում մարդու իրավունքներին առնչվող խոշոր թեմաների վերաբերյալ հրապարակային զեկույցներ ներկայացնելու լիազորությամբ:

Հանձնակատարների աշխատանքը սովորաբար կազմակերպվում է հետևյալ գործողությունների շուրջ. Մարդու իրավունքների խորհրդին (որոշ դեպքերում՝ նաև Գլխավոր ասամբլեային) թեմատիկ զեկույցների ներկայացում, այցելություններ այն երկրներ, որոնց վերաբերյալ զեկույցներ են ներկայացվում Մարդու իրավունքների խորհրդին՝ ի լրումն թեմատիկ զեկույցների, մարդու իրավունքների ենթադրվող խախտումների վերաբերյալ նամակների հղում խնդրո առարկա կառավարություններին (անհետաձգելի գործողություններ ձեռնարկելու կոչ կամ ենթադրվող խախտումները ներկայացնող նամակ) և խիստ մտահոգիչ խնդիրների վերաբերյալ մամլո հաղորդագրությունների թողարկում:

¹² Հատուկ ընթացակարգերում ներգրավված բոլոր հանձնակատարներն այստեղ հիշատակված են որպես փորձագետներ կամ հանձնակատարներ:

Հրատապ դիմումներ և նամակ-հայտարարություններ

Ստացված տեղեկությունների ընդունելիության չափանիշները

Որոշ փորձագետներ իրենց մանդատներով լիազորված են տեղեկություններ ստանալ տարբեր աղբյուրներից՝ կառավարություններից, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններից, մարդու իրավունքների խախտումների ենթադրյալ տուժողներից և վկաներից:

Հավաստի տեղեկություն ստանալով այն մասին, որ տեղի է ունեցել կամ պատրաստվում է տեղի ունենալ մարդու իրավունքների որևէ խախտում, իրենց մանդատի շրջանակներում որոշ փորձագետներ միջամտում են և անմիջականորեն աշխատում իշխանությունների հետ:

Նրանք կարող են Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի միջոցով գրություն ուղարկել (սովորաբար՝ նամակի տեսքով) խնդրո առարկա կառավարությանը՝ խնդրելով տեղեկություններ և մեկնաբանություններ տրամադրել մարդու իրավունքների հայտարարվող խախտման վերաբերյալ, և առաջարկելով կանխարգելիչ գործողություններ կամ հետաքննություն ձեռնարկել:

Գրությունները կարող են առնչվել անհատական, խմբային կամ համայնքային գործերի, այս կամ այն երկրում մարդու իրավունքների խախտումների ընդհանուր միտումներին և կրկնվող տեսակներին, գործող կամ նախագծային վիճակում գտնվող մտահոգիչ օրենսդրության բովանդակությանը:

Միջամտությունը կարող է վերաբերել մարդու իրավունքների այնպիսի խախտման, որն արդեն կատարվել է, ընթացքի մեջ է կամ ամենայն հավանականությամբ կկատարվի, եթե համապատասխան քայլեր չձեռնարկվեն: Միջամտության որոշումը կայացվում է հատուկ ընթացակարգի հանձնակատարի հայեցողությամբ և պետք է համապատասխանի չափանիշների, որոնք ամրագրված են հատուկ ընթացա-

կարգերի Վարքականոնում, որը Մարդու իրավունքների խորհրդի կողմից ընդունվել է 2006 թ. հունիսին¹³:

Համաձայն Վարքականոնով սահմանված ընդունելիության չափանիշների, գրությունները պետք է ակնհայտ անհիմն չլինեն, քաղաքական դրդապատճառներ չունենան, չլինեն վիրավորական կամ հիմնված բացառապես զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների վրա: Գրությունները (հաղորդումները) պետք է պարունակեն հայտարարվող խախտման փաստացի նկարագրությունը և հանձնված լինեն այնպիսի անձի կամ կազմակերպության կողմից, ով պնդում է, որ ուղղակի և հավաստի տեղեկություններ ունի հայտարարվող խախտումների վերաբերյալ: Ստացված տեղեկությունների կապակցությամբ ձեռնարկվելիք քայլերը որոշելիս հանձնակատարներն ընդհանուր առմամբ ուսումնասիրում են աղբյուրի վստահելիությունը, ստացված տեղեկություններում ներքին հակասությունների բացակայությունը, շարադրված փաստական մանրամասները և բուն մանդատի (լիազորության) շրջանակը:

Ի՞նչ կարգի գործողություն կարող է ձեռնարկել փորձագետը

Գրությունների ուղարկում կառավարություններին

Սովորաբար գրությունները լինում են կամ «**հրատապ դիմումի**» կամ «**նամակ-հայտարարության**» տեսքով: Այն դեպքերում, երբ գործերը մեկից ավելի մանդատի շրջանակներում են, հանձնակատարները կարող են համատեղ գրություններ ուղարկել:

«**Հրատապ դիմումները**» կիրառվում են ժամանակային առումով «զգայուն» խախտումների մասին տեղեկացնելու համար. դրանք են՝ կյանքի կորուստը, կյանքի համար վտանգավոր իրավիճակները կամ անդառնալի կամ շարունակվող էական վնասները, որոնք պահանջում են հրատապ միջամտություն՝ խախտումը դադարեցնելու համար:

¹³ Մարդու իրավունքների խորհրդի 5/2 բանաձև: Այստեղ հատուկ ընթացակարգերի բոլոր հանձնակատարները հիշատակված են որպես փորձագետներ կամ հանձնակատարներ:

Նպատակն այն է, որ պետական իշխանության համապատասխան մարմինները որքան հնարավոր է արագ տեղեկացվեն հանգամանքների մասին, որպեսզի կարողանան միջամտել՝ մարդու իրավունքների խախտումը դադարեցնելու կամ կանխարգելելու համար:

«խախտման վերաբերյալ նամակ-հայտարարությունները» կիրառվում են՝ արդեն տեղի ունեցած խախտումների մասին տեղեկություններ հայտնելու համար, որոնց ազդեցությունը ենթադրյալ տուժողի վրա այլևս չի կարող խորանալ: Այսօրինակ նամակն օգտագործվում է, մասնավորապես, այն դեպքերում, երբ տեղեկությունը հանձնակատարին է հասնում մարդու իրավունքների խախտումը տեղի ունենալուց հետո:

Երկու տեսակի նամակների դեպքում էլ հանձնակատարը գործին առնչվող կառավարությանը խնդրում է ձեռնարկել համապատասխան բոլոր միջոցները՝ հայտարարվող իրադարձություններն ուսումնասիրելու և իրավիճակը կարգավորելու նպատակով, և տեղեկացնել այդ ուսումնասիրության և գործողությունների արդյունքների վերաբերյալ: Կախված կառավարության արձագանքից, փորձագետը կարող է որոշել՝ շարունակել ուսումնասիրությունը կամ առաջարկություններ ներկայացնել:

Այս գրությունները (հաղորդումներն) մեղադրական բնույթ չեն կրում, դրանք չեն կարող փոխարինել դատական պրոցեսին և չեն ներառում հանձնակատարի անձնական գնահատականը պարունակող որևէ դատողություն: Դրանք ենթադրյալ խախտումների վերաբերյալ պարզաբանում խնդրելու միջոց են՝ ուղղված տվյալ երկրի կառավարության հետ համատեղ մարդու իրավունքների պաշտպանությանը:

Ուղարկված և ստացված բոլոր գրությունները գաղտնի են պահվում այնքան ժամանակ, քանի դեռ փորձագետն առանձին գործերի վերաբերյալ կառավարություններին ուղարկված գրությունների և ստացված պատասխանների մասին իր զեկույցը չի հանձնել Մարդու իրավունքների խորհրդին: Ենթադրյալ տուժողների անուններն արտացոլվում են Խորհրդի հաշվետվություններում, բացառությամբ երեխաներին առնչվող կամ հատուկ հանգամանքներ պարունակող գործերի:

Ինչպես ներկայացնել տեղեկություններ

Որպեսզի մարդու իրավունքների հայտարարվող խախտումը գրանցվի, բոլոր հատուկ ընթացակարգերի պարագայում պետք է տրամադրվեն առնվազն հետևյալ տեղեկությունները.

- տեղեկությունները տրամադրող անձի (անձանց) կամ կազմակերպության (կազմակերպությունների) ինքնությունը,
- ենթադրյալ տուժողի (տուժողների) լրիվ անունը, ազգանունը, նրա (նրանց) տարիքը, սեռը, ծննդավայրը կամ բնակության վայրը,
- հնարավորինս շատ մանրամասների ճշգրտում խումբ կամ համայնք ընդգրկող գործերով,
- դեպքի ամսաթիվը և վայրը (եթե ճշգրիտ ամսաթիվն անհայտ է՝ նշել մոտավոր օրը),
- մարդու իրավունքների ենթադրյալ խախտում պարունակող դեպքի հանգամանքների մանրամասն նկարագրությունը,
- ենթադրյալ իրավախախտի (իրավախախտների) անունը (անունները) և/կամ պաշտոնը/գործունեության տեսակը (եթե հայտնի է), ինչպես նաև՝ ենթադրյալ շարժառիթները,
- նպատակահարմարության դեպքում նշեք, թե ինչ քայլեր են ձեռնարկվել պետական մակարդակով (օրինակ՝ ոստիկանությունը տեղեկացվել է արդյոք, նախաքննություն կատարվել է, ընդգրկված են արդյոք պետական իշխանության այլ մարմիններ, ո՞րն է կառավարության դիրքորոշումը, եթե որևէ դիրքորոշում առկա է),
- նպատակահարմարության դեպքում նշեք, թե միջազգային մակարդակով ինչ քայլեր են ձեռնարկվել (օրինակ, գործարկվել են արդյոք միջազգային այլ մեխանիզմներ):

Տեղեկությունների աղբյուրը գաղտնի է պահվում:

Որոշ հանձնակատարներ մշակել են հատուկ ձևաթղթեր կամ հարցաշարեր՝ գրությունների համար տեղեկություններ հավաքելու նպատակով:

Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ գործերը կարող են ներկայացվել վերոշարադրյալ տեղեկությունների տրամադրման կամ Մարդու իրավունքների հարցով գերագույն հանձնակատարի գրասենյակի կայքէջում տեղադրված համապատասխան ձևաթուղթը կամ հարցաշարը լրացնելու միջոցով, որոնք կարելի է գտնել հետևյալ կայքէջում. <http://www.ohchr.org/english/bodies/chr/special/index.htm>:

Տեղեկությունները կամ լրացված ձևաթուղթը հարկ է ուղարկել.

ֆաքսի միջոցով. +41 22 917 90 06

էլ-փոստի միջոցով: urgent-action@ohchr.org

կամ փոստային նամակի տեսքով.

Quick Response Desk
Office of the High Commissioner for Human Rights
United Nations Office at Geneva
8-14 avenue de la Paix
1211 Geneva 10, Switzerland

Արագ արձագանքման բաժին
Մարդու իրավունքների հարցերով
գերագույն հանձնակատարի գրասենյակ
Միավորված ազգերի կազմակերպության Ժնևի գրասենյակ
Խաղաղության մայրուղի, 8-14
1211, Ժնև 10, Շվեյցարիա

Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հրատապ դիմումներ և նամակ-հայտարարություններ ուղարկելու հատուկ թեմատիկ ընթացակարգերի ցանկ

- Հատուկ զեկուցող բավարար բնակարանային պայմանների՝ որպես բավարար կենսամակարդակի իրավունքի բաղադրիչի, հարցով.
- Աշխատանքային խումբ կամայական կալանավորման հարցով.
- Հատուկ զեկուցող մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի հարցերով.
- Հատուկ զեկուցող կրթության իրավունքի հարցերով.
- Աշխատանքային խումբ հարկադրական անհետացումների հարցերով.
- Հատուկ զեկուցող արտադատական, առանց դատի կամ կամայական մահապատիժների հարցերով.
- Հատուկ զեկուցող սննդի իրավունքի հարցերով.
- Հատուկ զեկուցող կարծիք ունենալու և արտահայտվելու ազատության իրավունքի քարոզման և պաշտպանության հարցերով.
- Հատուկ զեկուցող կրոնի կամ դավանանքի ազատության իրավունքի հարցերով.
- Հատուկ զեկուցող ֆիզիկական և մտավոր առողջության հնարավոր բարձրագույն աստիճանի հասնելու՝ յուրաքանչյուրի իրավունքի հարցերով.
- Գլխավոր քարտուղարի հատուկ զեկուցող մարդու իրավունքների պաշտպանների հարցերով.
- Հատուկ զեկուցող դատավորների և փաստաբանների անկախության հարցերով.
- Հատուկ զեկուցող տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների և հիմնարար ազատությունների վիճակի հարցերով.

- Աշխատանքային խումբ վարձկաններին որպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի կենսագործմանը խոչընդոտելու միջոց օգտագործելու հարցերով.
- Հատուկ զեկուցող միգրանտների իրավունքների վիճակի հարցերով.
- Անկախ փորձագետ փոքրամասնությունների հարցերով.
- Հատուկ զեկուցող ռասիզմի, ռասայական խտրականության, այլ-ատյացության ժամանակակից ձևերի և դրանց հետ կապված անհանդուրժողականության հարցերով.
- Հատուկ զեկուցող ահաբեկչության դեմ պայքարի ընթացքում մարդու իրավունքների քարոզման և պաշտպանության հարցերով.
- Հատուկ զեկուցող խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով.
- Հատուկ զեկուցող թունավոր և վտանգավոր արտադրանքի և թափոնների գաղտնի տեղափոխման և բեռնաթափման միջոցով մեկուսացնելու՝ մարդու իրավունքների իրականացման վրա բացասական հետևանքների հարցերով.
- Հատուկ զեկուցող անձանց, հատկապես՝ կանանց և երեխաների թրաֆիքինգի հարցերով.
- Հատուկ զեկուցող կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների հարցերով:

Ե. Մարդու իրավունքների խորհրդի աշխատանքային խմբերը

Զարգացման իրավունքի հարցերով բաց աշխատանքային խումբը

Զարգացման իրավունքի հարցերով բաց աշխատանքային խումբն ստեղծվել է Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից: 2007 թ. մարտին Մարդու իրավունքների խորհուրդը երկու տարով երկարաձգել է այս խմբի լիազորությունները (որոշում թիվ 4/4):

Աշխատանքային խումբն անց է կացնում ամենամյա նստաշրջան՝ հինգ աշխատանքային օր տևողությամբ: Այս խմբի մանդատը ենթադրում է հետևյալը.

- իրականացնել զարգացման իրավունքի քարոզման և կենսագործման հարցում առաջընթացի մշտադիտարկում և գնահատում,
- ուսումնասիրել պետությունների, Միավորված ազգերի կազմակերպության գործակալությունների և ամենօրյալ այլ միջազգային և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացրած հաշվետվությունները և այլ տեղեկությունները,
- խորհրդի քննությանը ներկայացնել նստաշրջանային զեկույց իրականացված քննարկումների վերաբերյալ, ներառյալ՝ խորհրդատվություն Մարդու իրավունքների հարցով գերագույն հանձնակատարին՝ կապված զարգացման իրավունքի իրացման հետ, ինչպես նաև տեխնիկական օժանդակության հնարավոր ծրագրերի առաջարկություններ՝ շահագրգիռ երկրների խնդրանքով:

Այս նույն որոշմամբ խորհուրդը երկու տարով երկարաձգել է նաև Ջարգացման իրավունքի հարցերով աշխատանքային խմբի շրջանակներում ստեղծված ***Ջարգացման իրավունքի իրագործման հարցերով բարձր մակարդակի հատուկ խմբի*** լիազորությունները:

Հատուկ խմբի նպատակն է՝ անհրաժեշտ փորձագիտական եզրակացություն տրամադրել **Աշխատանքային խմբին**, որպեսզի վերջինս հնարավորություն ունենա զարգացման իրավունքի իրագործման վերաբերյալ հանձնարարականներ ներկայացնել տարբեր դերակատարների: Հատուկ խումբը կազմվում է Ջարգացման իրավունքի հարցերով աշխատանքային խմբի նախագահի կողմից՝ Միավորված ազգերի կազմակերպության տարածաշրջանային բոլոր խմբերի և այլ հաստատությունների ներկայացուցիչների, այդ թվում՝ միջազգային հատկորոշված առևտրային, ֆինանսական և զարգացման հաստատությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցությունների արդյունքում առաջադրված հինգ փորձագետներից: Հատուկ խումբը գումարում է

յոթ աշխատանքային օր տևողությամբ տարեկան նստաշրջաններ և իր հաշվետվությունները ներկայացնում Աշխատանքային խմբին:

Զ. Սոցիալական ֆորում

2007 թ. Մարդու իրավունքների խորհուրդը երկարաձգեց Սոցիալական ֆորումի լիազորությունները՝ այն պահպանելով որպես «Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների մեխանիզմների և տարատեսակ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղական ոչ կառավարական կազմակերպությունների փոխգործակցային երկխոսության եզակի տարածք: Խորհուրդն ընդգծում է ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում համակարգված ջանքերի կարևորությունը սոցիալական արդարության, հավասարության և համերաշխության սկզբունքների վրա հիմնված սոցիալական համախմբվածություն քարոզելու համար, ինչպես նաև գլոբալացման ընթացիկ գործընթացի սոցիալական հատույթի և մարտահրավերների հետ կապված խնդիրները հաղթահարելու հարցում» (բանաձև թիվ 6/13):

Նախկին Ենթահանձնաժողովի¹⁴ նախաձեռնությունը՝ «Սոցիալական ֆորում 38»-ը, ձևավորվեց որպես տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով նախանստաշրջանային ֆորում, որն անցկացվում էր Ենթահանձնաժողովի տարեկան նստաշրջաններից առաջ: Եթե նախկինում Սոցիալական ֆորումը Ենթահանձնաժողովի ենթակառույց էր, ապա ներկայումս այն Մարդու իրավունքների խորհրդի անկախ մեխանիզմ է:

Սոցիալական ֆորումը նիստեր է գումարում ամեն տարի՝ երեք աշխատանքային օր տևողությամբ՝ Խորհրդի կողմից նախանշված որոշակի թեմատիկ խնդիրների շուրջ:

Է. Փոքրամասնությունների հարցերով ֆորումը

Փոքրամասնությունների հարցով ֆորումը փոխարինեց նախկին Ենթահանձնաժողովի¹⁵ փոքրամասնությունների հարցերով աշխատանքային խմբին: Այն հիմք է ապահովում այնպիսի հարցերի շուրջ երկխոս-

¹⁴ Ենթահանձնաժողովի մասին տես՝ էջ 29:

¹⁵ Տես՝ նույն տեղում:

սության և համագործակցության խթանման համար, ինչպիսիք են ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին ամենվող խնդիրները: Դա տեղի է ունենում հետևյալ միջոցներով.

- փոքրամասնությունների հարցերով անկախ փորձագետի աշխատանքի համար թեմատիկ ներդրումների և փորձագիտական գնահատականի ապահովում, և
- ոլորտում առկա լավագույն փորձի, մարտահրավերների, հնարավորությունների և նախաձեռնությունների որոշարկում և վերլուծություն՝ Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների վերաբերյալ հռչակագրի հետագա իրագործման համար:

Ամեն տարի ֆորումը երկու աշխատանքային օր տևողությամբ թեմատիկ քննարկումների համար հավաքվում է ժնկում, և ակնկալվում է, որ այն կնպաստի Գերագույն հանձնակատարի ջանքերին՝ բարելավելու Միավորված ազգերի կազմակերպության մեխանիզմների, մարմինների ու մասնագիտացված գործակալությունների, հիմնադրամների ու ծրագրերի համագործակցությունը փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների քարոզման և պաշտպանության գործողություններում, ներառյալ տարածաշրջանային մակարդակով:

Ֆորումի նախագահը (որին տարածաշրջանային ռոտացիայի սկզբունքով ամեն տարի նշանակում է Խորհրդի նախագահը) պատասխանատու է Ֆորումի քննարկումների ամփոփագրի պատրաստման համար, իսկ փոքրամասնությունների հարցերով անկախ փորձագետն ուղղորդում է Ֆորումի աշխատանքը և նախապատրաստում տարեկան ռիստերը: Ակնկալվում է նաև, որ անկախ փորձագետն իր զեկույցում ներառի Ֆորումի թեմատիկ հանձնարարականները և ապագա թեմատիկ խնդիրների վերաբերյալ առաջարկությունները՝ Խորհրդի քննարկմանը ներկայացնելու համար:

Ը. Տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների հարցով Փորձագիտական մեխանիզմ

Տեղաբնիկ ժողովուրդների հարցերով Փորձագիտական մեխանիզմը նախկին Ենթահանձնաժողովի՝ տեղաբնիկ ժողովուրդների հարցով աշխատանքային խմբի իրավահաջորդն է: Հանդիսանալով Մարդու իրավունքների խորհրդի ենթադաս մարմին՝ Փորձագիտական մեխանիզմը վերջինիս ապահովում է տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների վերաբերյալ թեմատիկ փորձագիտական գնահատականներով՝ խորհրդի կողմից առաջարկված եղանակով և ձևաչափով: Փորձագիտական մեխանիզմը տարեկան հաշվետվություններ է ներկայացնում խորհրդին, ուշադրությունը սևեռում է հիմնականում ուսումնասիրությունների և հետազոտությունների վրա հիմնված խորհրդատվության վրա, և կարող է իր աշխատանքի շրջանակներում առաջարկներ ներկայացնել խորհրդի դիտարկմանը և հաստատմանը:

Փորձագիտական մեխանիզմը բաղկացած է հինգ անկախ փորձագետից. նրանցից յուրաքանչյուրը պաշտոնավարում է երեք տարի՝ ունենալով ևս մեկ ժամկետով վերընտրվելու հնարավորություն: Այն կարող է նիստեր գումարել տարեկան մինչև հինգ օր տևողությամբ՝ դրանք համադրելով մասնավոր և հանրային հանդիպումների հետ, և ազատ է աշխատանքի սեփական մեթոդների որոշման հարցում՝ չունենալով, սակայն, բանաձևեր և որոշումներ ընդունելու իրավասություն:

Տեղաբնիկ ժողովուրդների մարդկային իրավունքների և հիմնարար ազատությունների իրավիճակի վերաբերյալ Հատուկ զեկուցողը և Տեղաբնիկների հարցերով մշտական ֆորումի մեկ անդամ ևս մասնակցում են Փորձագիտական մեխանիզմի տարեկան նիստերին և իրենց ներդրումն են ունենում դրանցում:

4. Մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրային համակարգի դերը ներպետական մակարդակում մարդու իրավունքների պաշտպանության համակարգերի ամրապնդման գործում

Մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերն իրավական գործիքներ են, որոնք մարդու իրավունքների քարոզման և պաշտպանության միջազգային չափանիշներ են սահմանում ամբողջ աշխարհում: Վավերացնելով պայմանագրերը՝ Պետություններն ստորագրում են այս չափանիշների տակ և ստանձնում ներպետական մակարդակում այդ իրավունքներն իրականացնելու պարտավորություն: Պայմանագրային մարմինները խրախուսում են Պետությունների այս ջանքերը և աջակցում դրանց: Կարող է տպավորություն ստեղծվել, թե մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրերի այս համակարգի առանցքում միջազգային մակարդակն է. մինչդեռ հստակ է, որ հենց ներպետական մակարդակում են մարդու իրավունքների քարոզումն ու պաշտպանությունն առավել կարևոր: Միջազգայնորեն համաձայնեցված չափանիշները, որոնք ամրագրված են պայմանագրերում, պահանջում են արդյունավետ կենսագործում ներպետական մակարդակում, որպեսզի ապահովվի, որ դրանցից օգտվեն յուրաքանչյուր երկրում բնակվող բոլոր տղամարդիկ, կանայք և երեխաները:

Որպես պայմանագրերում ամրագրված մարդկային իրավունքների միջազգային չափանիշների իրականացումը վերահսկելու նպատակով հիմնադրված մարմիններ՝ պայմանագրային մարմինները կարևոր դերակատարում ունեն ազգային մակարդակում մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդմանն ուղղված ջանքերին աջակցելու հարցում: Նախ, պայմանագրային մարմիններին հաշվետու լինելու գործընթացն ինքնին մարդու իրավունքների պաշտպանության ներպետական համակարգի զարգացման կարևոր բաղադրիչ է: Երկրորդ, պայմանագրային մարմինների աշխատանքի արդյունքում Պետություններն ապահովվում են գործնական խորհուրդներով և աջակցությամբ՝ ուղղված պայմանագրերի լավագույնս իրականացմանը:

Ներպետական մակարդակում հաշվետվություններ ներկայացնելու գործընթացի կարևորությունը

Ջանքերը՝ ուղղված Պետություններին խրախուսելուն, որպեսզի վերջիններս հաշվետվությունների հարցում համապարփակ մոտեցում հանդես բերեն՝ ուշադրություն դարձնելով իրենց ստանձնած բոլոր պարտավորություններին, ուղղված չեն սոսկ Պետությունների համար միջազգային պայմանագրային մարմիններին հաշվետվություններ ներկայացնելու գործընթացը հեշտացնելուն: Թեպետ միջազգային մարմիններին հաշվետվությունների ներկայացումը պարտադիր է, սակայն ներպետական մակարդակում շատ կարևոր է այն գործընթացը, որի արդյունքում ստեղծվում է յուրաքանչյուր զեկույց:

Հաշվետվականության հարցերում պայմանագրերով ստանձնած իրենց պարտավորությունները կատարելով Պետությունները ներգրավվում են ինքնագնահատման գործընթացում՝ չափելու համար, թե որչափ արդյունավետ են պաշտպանվում մարդու իրավունքներն իրենց երկրում: Մարդու իրավունքների իրականացման վերաբերյալ տեղեկատվության հավաքման գործընթացը ներպետական մակարդակում կարևոր միջոց է, որն օգնում է կառավարություններին՝ նախագծել և կենսագործել իրավունքների վրա հիմնված զարգացման ծրագրեր: Շատ երկրներ ներգրավված են պայմանագրերից բխող հաշվետվությունների ներկայացման, մարդու իրավունքների ոլորտում գործողությունների ազգային ծրագրի ձևավորման և ազգային զարգացման ծրագրերի իրականացման զուգահեռ գործընթացներում:

Այս գործընթացների շաղկապումը կարող է ապահովել, որ մարդու իրավունքները դրվեն ազգային ռազմավարական պլանավորման առանցքում՝ այդպիսով ներպետական մակարդակում ապահովելով մարդու իրավունքների չափանիշների ավելի արդյունավետ իրականացումը: Հաշվետվականության գործընթացը, սկսած զեկույցների պատրաստումից մինչև զեկույցի միջազգային դիտարկման և պայմանագրային մարմնի առաջարկություններին տվյալ պետության պատասխանելու գործընթացը, կարող է նաև ծառայել քաղաքացիական հասարակության շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ ներպետական բանավեճի ծավալմանը և մարդու իրավունքների ջատագովների նոր խմբերի առաջացմանը:

Գործնական խորհուրդներ և աջակցություն պայմանագրային մարմիններին

Պայմանագրային մարմինների աշխատանքի արդյունքում Պետությունները, ինչպես նաև առանձին երկրներում ՄԱԿ-ի ներկայացուցչություններն ու դոնորները կարող են ապահովվել օգտակար խորհրդատվությամբ այն մասին, թե մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդման որ կողմերին է հարկավոր ավելի մեծ ուշադրություն հատկացնել: Երբ մասնակից պետության զեկույցն արդեն պատրաստվել է և դիտարկվել պայմանագրային մարմինների կողմից, գործնական և նպատակաուղղված եզրափակիչ դիտարկումներն ու առաջարկությունները հստակ խորհուրդներ են տրամադրում այն կոնկրետ ոլորտների վերաբերյալ, որոնք ուշադրություն են պահանջում: Կոմիտեների կողմից ի պատասխան անհատական բողոքների արտահայտված կարծիքներն առանձնահատուկ խորհրդատվության մեկ այլ աղբյուր են, որոնց ուշադրության առանցքում որոշակի խնդրահարույց ոլորտներ են, որտեղ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտություն կա: Պայմանագրային մարմինների ընդհանուր մեկնաբանություններն ավելի մանրակրկիտ մշակված հավելյալ տեղեկություն են այն մասին, թե ինչպես պետք է իրականացվեն պայմանագրերը:

Պայմանագրային մարմինների աշխատանքի արդյունքները կարող են էական ազդեցություն ունենալ երկրի ներսում՝ նպաստելով պայմանագրերի ավելի արդյունավետ իրականացման ապահովմանը, մասնավորապես նոր օրենսդրական նախագծեր ներկայացնելու կամ պետական պաշտոնյաների համար մարդու իրավունքների հարցերով վերապատրաստումներ կազմակերպելու միջոցով: Ազդեցության աստիճանը կախված է ոչ միայն կառավարությունից, այլև այլ դերակատարներից, որոնք երկրի ներսում կարող են ազդեցություն ունենալ այն բանի վրա, թե ինչպես են պաշտպանվում և քարոզվում մարդու իրավունքները, այդ թվում՝ համապետական և տեղական խորհրդարանները, մարդու իրավունքների պաշտպանության ներպետական հաստատությունները, դատավորները և փաստաբանները, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը:

5. Հազարամյակի զարգացման նպատակները և մարդու իրավունքները

Զարգացման հասնելու և այն պահպանելու հարցում մարդու իրավունքները առանցքային նշանակություն ունեն: Հազարամյակի հռչակագրով, որն աշխարհի բոլոր պետությունների առաջնորդների կողմից ընդունվել է 2000 թ., ձևաչվել է մարդու իրավունքների, բարեխիղճ կառավարման և զարգացման միջև կապի առկայությունը:

Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) հռչակումից տասը տարի անց ակնհայտ է, որ մարդկային բարեկեցության և արժանապատիվ կյանքի նպատակները, որոնք ամրագրված են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, չեն իրականանա, եթե ՀՁՆ-ների իրականացմանը հետամուտ լինենք մարդու իրավունքներից առանձին:

Թեպետ որոշ երկրներ այս նպատակներից մի քանիսին հասնելու ճանապարհին են, սակայն ավելի քան մեկ միլիարդ մարդ դեռևս գտնվում է ծայրահեղ աղքատության ճիրաններում: Մարտահրավերներն առավել դաժան են ամենաքիչ զարգացած, ինչպես նաև դեպի ծով ելք չունեցող երկրներում, փոքր կղզի հանդիսացող որոշ զարգացող պետություններում և այն երկրներում, որոնք խոցելի են բնական աղետների և զինված հակամարտությունների առումով: Այնուամենայնիվ, նույնիսկ ամենամեծ հաջողություններն արձանագրող երկրներում դեռևս առկա են զգալի անհամամասնություններ, և ՀՁՆ-ներին հասնելու մրցավազքում միլիոնավոր մարդիկ հետևում են մնացել: Անբարեխիղճ կառավարման և մարդու իրավունքների բազմակի խախտումների արդյունքում աղքատությունը և զրկանքները հաճախ ահագնանում են:

Մինչև 2015 թ., որը Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելու վերջնաժամկետն է, մնացել է ընդամենը հինգ տարի, և շատ կարևոր է, որպեսզի բոլորս վերահաստատենք մեր հավատարմությունը մարդու իրավունքների վրա հիմնված զարգացման մոտեցմանը:

2010 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ ՄԱԿ-ի բարձր մակարդակի հանդիպում` ՀՁՆ-ներին հասնելու հարցում առկա առաջընթացի վերանայման նպատակով: 2010 թ. բարձր մակարդակի հանդիպումը

հանգեցրեց առկա պարտավորությունների նորոգման, ինչպես նաև խթանեց համակարգված գործողությունները բոլոր շահագրգիռ կողմերի միջև՝ ամրապնդելու համար մարդու իրավունքները և բարեխիղճ կառավարումը՝ որպես համաշխարհային զարգացմանն ուղղված ջանքերի անբաժանելի մաս:

2000 թ. ՄԱԿ-ի անդամ երկրները համաձայնության եկան Հազարամյակի հռչակագրից բխեցված Հազարամյակի զարգացման ութ նպատակների շուրջ, որոնց իրականացման համար (մինչև 2015 թ.) պահանջվում է բոլոր ազգերի (զարգացած և զարգացող) միասնական աշխատանքը: Հազարամյակի զարգացման բոլոր ութ նպատակները կարելի է կապել մարդու իրավունքների վերաբերյալ դաշնագրերի դրույթների և դաշնագրային մարմինների ընդհանուր դիտողությունների հետ:

ՀՁՆ 1. Ծայրահեղ աղքատության և սովի վերացում

ICESCR (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր) - հոդված 11 և Ընդհանուր դիտարկումներ (ԸԴ) 12, CRC (Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա) – հոդվածներ 24(2) և 27(3)

ՀՁՆ 2. Տարրական համընդհանուր կրթության ապահովում

ICESCR - հոդվածներ 13, 14 և ԸԴ 11, CRC - հոդված 28(ա) և ԸԴ 1, CERD (Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա) - հոդվածներ 5 և 7

ՀՁՆ 3. Գենդերային հավասարության խթանում և կանանց լիազորությունների ընդլայնում

CEDAW (Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա), ICESCR - հոդվածներ 3 և 7(ա)(i), ICCPR (Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր) - հոդվածներ 3, 6(5) և 23(2), CRC - հոդված 2, CERD - ԸԴ 25

ՀԶՆ 4. Երեխաների մահացության նվազեցում

CRC - հոդվածներ 6 և 24(2)(ա), ICESCR - հոդված 12(2)(ա) և ԸԴ 14

ՀԶՆ 5. Մայրական առողջության բարելավում

CEDAW - հոդվածներ 10(ը), 11(զ), 12(1), 14(բ) և ԸԴ 24, CERD - հոդված 5(ե)(iv), ICESCR - ԸԴ 14, CRC - հոդված 24(դ)

ՀԶՆ 6. Պայքար ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների դեմ ICESCR ԸԴ 14, CRC - հոդված 24(զ)

ՀԶՆ 7. Շրջակա միջավայրի կայունության ապահովում

ICESCR - ԸԴ-ներ, 4, 7, 14 և 15, CRC - հոդված 24(զ)

ՀԶՆ 8. Զարգացման նպատակով գլոբալ համագործակցության ձևավորում

ՄԱԿ-ի կանոնադրություն - հոդված 1(3), ICESCR - հոդված 2, CRC - հոդված 4

6. Հայաստանի Հանրապետության պարտավորությունները ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմներին

Անկախության ձեռքբերմամբ Հայաստանի Հանրապետությունը մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային պայմանագրերին և համաձայնագրերին միանալու, միջազգային կազմակերպություններին անդամակցելու և միջազգային համաժողովներին մասնակցելու աննախադեպ հնարավորություն ստացավ: Բազմիցս հավաստելով մարդու իրավունքների պաշտպանության գործում իր նախանձախնդրությունը՝ անցած տարիների ընթացքում ՀՀ-ը միացել է այն հիմնարար միջազգային փաստաթղթերին, որոնք կնքվել են ինչպես համընդհանուր, այնպես էլ տարածաշրջանային մակարդակներով:

Հայաստանը միացել է **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին**, որը մեծապես նպաստել է հանրապետությունում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը¹⁶:

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների հիմնարար պայմանագրերին մասնակցության աղյուսակը տե՛ս **Հավելված 3**-ում:

ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններին Հայաստանի Հանրապետության պարբերական զեկույցների աղյուսակը տե՛ս **Հավելված 4**-ում:

Մաս կազմելով ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգին՝ անդամ երկրները բաց հրավերներ են ուղարկում բոլոր թեմատիկ ընթացակարգերին: Դրանով կառավարությունները հայտարարում են, որ պատրաստակամ են ընդունելու այցելության խնդրանքներ բոլոր թեմատիկ ընթացակարգերից: Սա ՄԱԿ-ի 2006 թ. բարեփոխումների արդյունքն է:

¹⁶ Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը. Գործողություն հանուն առաջընթացի: Մարդկային զարգացման ազգային զեկույց, ՄԱԶԾ, 2000 թ., էջ 30:

2010 թ. հունիսի 30-ի դրությամբ 72 պետություն, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունը (2006 թ. ապրիլին), ուղարկել են նման հրավերներ:

6.1. Հատված «Հայաստանի Հանրապետության կանավոր ստանձնած պարտավորություններն ու հանձնառությունները մարդու իրավունքների վերաբերյալ» 2006 թ. մայիսի հուլիսի 1-ից

Որպես մարդու իրավունքների քարոզմանն ու պաշտպանությանն անվերապահ հավատարիմ երկիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշել է իր թեկնածությունն առաջադրել նորաստեղծ Մարդու իրավունքների խորհրդում ընտրվելու համար:

Հայաստանի Հանրապետությունը հետևողական և կառուցողական աշխատանք է տարել ներպետական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում՝ մարդու իրավունքների քարոզման և պաշտպանության ուղղությամբ: Հայաստանի կառավարությունը վերջին տարիներին ներպետական մակարդակում ստեղծել է մարդու իրավունքների պաշտպանության իրավական և գործնական մեխանիզմներ: Բարեփոխումների շարունակվող գործընթացը ճանապարհ է հարթել Եվրոպայի խորհրդին Հայաստանի անդամակցության և այդ անդամակցությամբ պայմանավորված պարտավորությունների իրականացման համար:

Հայաստանը հաջողությամբ կատարում է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության համակարգերը կատարելագործելու իր ներպետական և միջազգային պարտավորությունները: Կարճ ժամանակաընթացքում Հայաստանը բարեփոխեց երկրում գործող ազատագրկման վայրերի համակարգը, վերացրեց մահապատիժը և մշակեց պարտադիր զինծառայությունից խուսափող անձանց իրավունքների պաշտպանության պատշաճ իրավական համակարգ: 2004 թ. մարտին հիմնվեց Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը: Հիմնավորապես ընդլայնվեց անհատների և խմբերի բոլոր հիմնական իրավունքների և ազատությունների քարոզման իրավական և ինստիտուցիոնալ համակարգը:

2005 թ. նոյեմբերին կայացած հանրաքվեի արդյունքում բարեփոխելով իր Սահմանադրությունը Հայաստանն է՛լ ավելի ամրապնդեց մարդու իրավունքները՝ Հայաստանի իրավական համակարգում՝ մարդու իրավունքների վերաբերյալ դրույթների ընդլայնման և դրանք միջազգային նորմերին ու չափանիշներին, ինչպես նաև միջազգային համապատասխան իրավական փաստաթղթերով Հայաստանի ստանձնած պարտավորություններին համահունչ դարձնելու միջոցով: Մարդու իրավունքների հետ կապված հարցերով Սահմանադրական դատարանին դիմելու իրավունքը տարածվեց անհատների վրա:

Հայաստանը միացել է մարդու իրավունքների և մարդասիրական ոլորտների միջազգային կարևորագույն գործիքներին, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ տարածաշրջանային պայմանագրերի, մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի պայմանագրերին, ի թիվս այլ հարցերի ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավասությունը: Հայաստանը հետևողականորեն իրագործում է այս փաստաթղթերով ստանձնած իր պարտավորությունները և սերտորեն համագործակցում մարդու իրավունքներով զբաղվող բոլոր մարմինների և ընթացակարգերի հետ (ՄԱԿ-ի համակարգ, Եվրոպայի խորհուրդ, ԵԱՀԿ):

Հայաստանը հավասարապես հավատարիմ է եղել համաշխարհային և տարածաշրջանային մակարդակներում մարդու բոլոր իրավունքների համակողմանի և համատարած քարոզման և պաշտպանության գործին: Արժանին մատուցելով Հայաստանի ջանքերին՝ միջազգային հանրությունն ընդլայնել է իր աջակցությունը՝ 2002 թ. Հայաստանին ընտրելով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ և այնուհետև վերընտրելով 2005 թ.: Հանձնաժողովի 60-րդ և 61-րդ նստաշրջաններում Հայաստանը հանդես եկավ որպես Արևելյան Եվրոպայի խմբի համակարգող և ընդլայնված Բյուրոյի անդամ: Ի գնահատումն Հայաստանի պատվիրակության իրականացրած կառուցողական աշխատանքի՝ Հայաստանը Հանձնաժողովի վերջին նստաշրջանի ընտրված փոխնախագահին էր:

Իր թեկնածությունն առաջադրելով Մարդու իրավունքների խորհրդին անդամակցելու համար՝ Հայաստանի կառավարությունը պաշտոնապես

ստանձնում է հետևյալ պարտավորություններն ու հանձնառությունները.

- Հայաստանը խորապես հավատացած է, որ խաղաղությունը, անվտանգությունը, զարգացումը և մարդու իրավունքները մեծապես փոխկապակցված և փոխադարձ ամրապնդող են: Այս առումով վճռորոշ է քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների, այդ թվում՝ զարգացման իրավունքի քարոզումը: Հայաստանը հաստատական է՝ նպաստելու պետությունների և տարածաշրջանների միջև հետագա համագործակցության և երկխոսության խթանմանը՝ քարոզելու համար քաղաքակրթությունների, մշակույթների և կրոնների միջև հանդուրժողականություն, հարգանք և փոխըմբռնում, ինչպես նաև ռասիզմի, ռասայական խտրականության և այլատյացության բոլոր ձևերի վերացմանը:
- Հայաստանն ակտիվորեն կմասնակցի Խորհրդի աշխատանքին՝ նպատակ ունենալով կատարելագործել անցյալի դրական փորձը և նոր մարմնի շրջանակներում հարթակ ապահովել կառավարությունների, ներպետական հաստատությունների և քաղաքացիական հասարակության փոխգործակցության և փոխադարձ կապերի համար: Հայաստանն ակտիվորեն կաջակցի Խորհուրդը բաց, թափանցիկ և արդյունավետ դարձնելուն ուղղված ջանքերին, ինչպես նաև՝ ապահովելուն, որ Խորհուրդն առաջնորդվի համընդհանրության, անկողմնակալության, օբյեկտիվության և խտրական վերաբերմունքի բացառման, կառուցողական միջազգային երկխոսության և մարդու իրավունքների ոլորտում համագործակցության սկզբունքներով:
- Հաստատականորեն աջակցելով յուրաքանչյուր պետության կողմից մարդու իրավունքների պարտավորությունների և հանձնառությունների իրականացման պարբերական համապարփակ դիտարկում (ՊՀԴ/UPR) անցկացնելու նպատակին՝ Հայաստանը կնպաստի դիտարկման այսօրինակ մեխանիզմի ստեղծմանը¹⁷: Առաջա-

¹⁷ Հայաստանի Հանրապետության ՊՀԴ-ի մասին տես՝ էջ 73:

դրելով իր թեկնածությունը Մարդու իրավունքների խորհրդում ընտրվելու համար՝ Հայաստանը բաց է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պարտավորությունների և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների քարոզման ու պաշտպանության ոլորտում իր արձանագրած արդյունքների ժամկետից շուտ դիտարկման համար:

- Հայաստանը հավատարիմ է մարդու իրավունքների քարոզման և պաշտպանության միջազգային համակարգերի կատարելագործման նպատակին՝ գործիքների հզորացման և հատուկ ընթացակարգերի ու մեխանիզմների կատարելագործման միջոցով:
- Հայաստանը կշարունակի իր համագործակցությունը հատուկ ընթացակարգերի հետ՝ նրանց գրություններին պատասխանելու և նրանց այցելությունների համար բոլոր անհրաժեշտ պայմաններն ապահովելու միջոցով: Ի հաստատումն իր ստանձնած պարտավորությունների՝ Հայաստանը երկարաձգում է բոլոր հատուկ ընթացակարգերին ուղղված մշտական հրավերը, որը փոխանցվել է Մարդու իրավունքների խորհրդին:
- Հայաստանը գտնվում է Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից Կամընտիր արձանագրությանը և Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիային կից Կամընտիր արձանագրությանը միանալու վերջին փուլում¹⁸. դրանք ներկայացված են Ազգային ժողովի վավերացմանը:
- Հայաստանը կշարունակի իր համագործակցությունը պայմանագրերի մոնիտորինգ իրականացող մարմինների հետ՝ ձգտելով վերացնել հաշվետվությունների ներկայացման հարցում կուտակված ուշացումները, և արագ ու բարեխղճորեն գործելով պայմանագրային մարմինների եզրափակիչ դիտարկումների և հանձնարարականների իրականացման ուղղությամբ:

¹⁸ Հայաստանի Հանրապետությունը նշյալ երկու կամընտիր արձանագրությունները արդեն վավերացրել է Ազգային ժողովում (տես՝ Հավելված 3):

- Հայաստանը նաև կնպաստի պայմանագրային մարմինների համակարգի ընթացիկ բարեփոխումներին և մասնավորապես՝ պայմանագրային մարմինների միասնական մեխանիզմի ստեղծման ջանքերին:
- Հայաստանը կշարունակի լիովին աջակցել Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի գործառնական կարողությունների և լիազորությունների հետագա ամրապնդմանը և հետայսու ևս կամավոր ներդրումների միջոցով կաջակցի Գրասենյակին:
- Հայաստանը կշարունակի խթանել ՄԱԿ-ի մարդու իրավունքների մեխանիզմների համագործակցությունը մարդու իրավունքների տարածաշրջանային մարմինների, այլոց թվում՝ Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի հետ:
- Հայաստանը կշարունակի ներպետական մակարդակով բարելավել մարդու իրավունքների քարոզումն ու պաշտպանությունը՝ մարդու իրավունքների պաշտպանության իրավական և գործնական մեխանիզմների հետագա զարգացման միջոցով, այդ թվում՝ վարչական և դատական համակարգերի բարեփոխումների ընդլայնման և Մարդու իրավունքների պաշտպանի կառույցի ամրապնդման միջոցով:
- Հայաստանը կշարունակի ներպետական մակարդակով քարոզել տնտեսական և սոցիալական իրավունքները՝ կառավարական ծրագրերի իրականացման, այդ թվում՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի և Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման գործողությունների ծրագրի միջոցով:
- Հայաստանը կշարունակի բարելավել երեխաների և կանանց իրավունքների պաշտպանությունը, այլոց թվում՝ իրականացնելով Երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թ. ների գործողությունների ազգային ծրագիրը, ինչպես նաև՝ մարդու իրավունքների պաշտպանության համաշխարհային և տարածաշրջանային մեխանիզմների հանձնարարականները:

- Հայաստանը հետագայում ևս միջոցառումներ կծեռնարկի մարդկանց թրաֆիքինգն արմատախիլ անելու ուղղությամբ՝ շարունակելով իրականացնել Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրեր:

6.2 Հայաստանի Հանրապետության առաջին պարբերական համապարփակ դիտարկումը

Հայաստանի Հանրապետության առաջին պարբերական համապարփակ դիտարկումն անց է կացվել ՊՀԴ աշխատանքային խմբի կողմից՝ 2010 թ. մայիսի 6-ին:

Տեղեկություններ այն նիստի մասին, որի ընթացքում քննարկվել է Հայաստանի զեկույցը, ինչպես նաև **«Ազգային զեկույցն»** ամբողջությամբ ՄԱԿ-ի պաշտոնական 6 լեզուներով կարելի է գտնել Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կայքէջում՝ հետևյալ հասցեով՝ <http://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/AMSession8.aspx>

10 հայաստանյան ՈԿԿ-ներ պատրաստել են **«Շահագրգիռ կողմերի զեկույց»**, որը նույնպես դիտարկվել է ՊՀԴ աշխատանքային խմբի վերոնշյալ նիստի ընթացքում:

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կայքէջում կարելի է գտնել առանձին պետությունների մասին էջեր, որոնցում գետեղված են անգլերեն տեղեկություններ տվյալ պետության հանձնառությունների ու ստանձնած պարտավորությունների մասին, պարբերական զեկույցները վերահսկող մարմիններին, մարդու իրավունքների հատուկ զեկուցողների տվյալ երկիր կատարած առաքելության(ների) մասին հաշվետվությունները:

Հայաստանի Հանրապետության մասին էջը կարելի է գտնել հետևյալ հասցեով.

<http://www.ohchr.org/EN/countries/ENACARegion/Pages/AMIndex.aspx>

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի կայքէջի պահուցում Հայաստանի Հանրապետության մասին փաստաթղթեր (1994 թ. ցայսօր) կարելի է գտնել այս հասցեով՝

http://ap.ohchr.org/documents/dpage_e.aspx?c=9&su=21

Նույն էջի լրատվական արխիվում Հայաստանի Հանրապետության վերաբերող լուրերը (1998 թ. ցայսօր) կարելի է գտնել հետևյալ հասցեով՝

<http://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/NewsSearch.aspx?CID=AM>

ՄԻՀՀ-ի 30 հոդվածների առարկայական ցանկ

Հոդվածների առարկան	Հոդվածների համարները
Ազատ արտահայտվելու, խոսքի և մամուլի ազատություն	18, 19, 20, 21
Անապաստանություն, ապաստան և սեփականություն	17, 22, 25, 27
Աշխատանքային իրավունքներ	4, 13, 20, 23, 24
Առողջություն	25
Գաղտնիություն	12
Երեխայի իրավունքներ	1, 4, 16, 24
Զարգացում	17, 22, 25, 28
Ընտանիք	12, 16
Իրավասություններ և հավասարություն օրենքի առաջ	6, 7, 8, 9, 10, 11, 21
Խաղաղություն	3, 12, 28
Կանանց իրավունքներ	1, 2, 4, 6, 7, 20, 21, 24
Խտրականություն	1, 2, 7
Խոշտանգումներ և նվաստացնող վերաբերմունք և պատիժ	5, 6
Կրթություն	18, 19, 20, 26, 27, 28

Կրոնի ազատություն	2, 7, 18, 19
Մամուլի և խոսքի ազատություն	18, 19
Մշակույթ և ժառանգություն	18
Միգրացիա	6, 13, 14
Սոցիալական ապահովություն	3, 22, 25
Ստրկություն և կախյալ վիճակ	4, 6, 24
Տեղաբնիկ ժողովուրդների իրավունքներ	1, 2, 6, 7
Տնտեսական և սոցիալական իրավունք	4, 6, 8, 22, 23, 24, 25, 26, 27, 28
Փախստականներ, ազգային պատկանելություն, կարգավիճակի բացակայություն և ապաստան	2, 6, 7, 13, 14, 15
Փոքրամասնությունների իրավունքներ	2, 4, 6, 7
Քաղաքական բանտարկյալներ	5, 6, 7, 8, 9, 10, 11
Քաղաքական իրավունքներ, քվեարկություն և մասնակցություն	10, 20, 21
Քաղաքացիական իրավունքներ	2, 3, 6, 7, 9, 10, 11, 18, 19, 20, 21

Մարդու իրավունքների հիմնարար պայմանագրերը, որոնք վերահսկող մարմինները¹⁹ և այդ փաստաթղթերի վավերացման վիճակը

Գոյություն ունի մարդու իրավունքների վերաբերյալ ինը հիմնարար միջազգային պայմանագիր, որոնցից յուրաքանչյուրի հիման վրա ստեղծվել է մասնակից երկրների կողմից պայմանագրի դրույթների կատարումը վերահսկող փորձագիտական կոմիտե: Պայմանագրերից մի քանիսն ունեն հատուկ հարցերի վերաբերող լրացուցիչ կամընտիր արձանագրություններ:

Պայմանագրերի վավերացման վիճակ ասելով հասկանում ենք ՄԱԿ-ի անդամ այն երկրների ամբողջությունը, որոնք տվյալ փաստաթուղթը վավերացրել են: Այդ վավերացումը հիմք է հանդիսանում տվյալ փաստաթղթին միանալու և համապատասխան պարտավորություններ ստանձնելու համար: Տվյալները՝ 2010 թ. հոկտեմբերի 29-ի դրությամբ.

¹⁹ Պայմանագրի վավերացման կարգավիճակի, հայտարարությունների ու վերապահումների մասին մանրամասն տե՛ս <http://treaties.un.org/Pages/Treaties.aspx?id=4&subid=A&lang=en>

Պայմանագրի հապավումը	Պայմանագրի վերնագիրը	Թվականը	վերա- հսկող մարմինը	վավերաց ման վիճակը
ICERD	Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա	21-ը դեկտեմբերի, 1965 թ.	CERD	173
ICCPR	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր	16-ը դեկտեմբերի, 1966 թ.	CCPR	166
ICESCR	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր	16-ը դեկտեմբերի, 1966 թ.	CESCR	160
CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա	18-ը դեկտեմբերի, 1979 թ.	CEDAW	186
CAT	խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նկատառման վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա	10-ը դեկտեմբերի, 1984 թ.	CAT	147

CRC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա	20-ը նոյեմբերի, 1989 թ.	CRC	193
ICRMW	Բոլոր միջրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա	18-ը դեկտեմբերի, 1990 թ.	CMW	43
ICPPED	Բոլոր մարդկանց հարկադրական անհետացումից պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիա ²⁰	20-ը դեկտեմբերի, 2006 թ. ²¹		19
CRPD	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա	13-ը դեկտեմբերի, 2006 թ.	CRPD	95
ICESCR-OP	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրություն	10-ը դեկտեմբերի, 2008 թ.	CESCR	3
ICCPR-OP1	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրություն	16-ը	HRC	113

²⁰ Պայմանագիրը դեռևս ուժի մեջ չի մտել:

²¹ Ընդունման թվականը:

	վուճքների մասին միջազգային դաշնագրին կից առաջին կամընտիր արձանագրություն	դեկտեմբերի, 1966 թ.		
ICCPR-OP2	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրություն՝ ի վերացումն մահապատժի	15-ը դեկտեմբերի, 1989 թ.	HRC	72
OP-CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն	6-ը հոկտեմբերի, 1999 թ.	CEDAW	100
OP-CRC-AC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն զինված հակամարտություններում երեխաների ներգրավվածության մասին	25-ը մայիսի, 2000 թ.	CRC	139
OP-CRC-SC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին	25-ը մայիսի, 2000 թ.	CRC	141

OP-CAT	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նկատացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիային կից կանոնադրություն	18-ը դեկտեմբերի, 2002 թ.	SPT	56
OP-CRPD	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային կից կանոնադրություն	13-ը դեկտեմբերի, 2006 թ.	CRPD	58

Մարդու իրավունքների հիմնարար պայմանագրերն ու Հայաստանի Հանրապետությունը

Պայմանագրի հապավումը	Պայմանագրի վերնագիրը	ՀՀ-ի՝ պայմանագրին միանալու թվականը	ՀՀ համար պայմանագրի ուժի մեջ մտնելու թվականը
ICERD	Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա	23-ը հունիսի, 1993 թ.	23-ը հունիսի, 1993 թ.
ICCPR	Քաղաքացիական և քաղաքական իրա- վունքների մասին միջազգային դաշնա- գիր	23-ը հունիսի, 1993 թ.	23-ը, սեպտեմբերի 1993 թ.
ICESCR	Տնտեսական, սոցիալական և մշակու- թային իրավունքների մասին միջազգային դաշնագիր	13-ը սեպտեմբերի, 1993 թ.	13-ը դեկտեմբերի, 1993 թ.
CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվեն- ցիա	13-ը սեպտեմբերի, 1993 թ.	13-ը հոկտեմբերի, 1993 թ.

CAT	Խոշտանագուճումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա	13-ը սեպտեմբերի, 1993 թ.	13-ը հոկտեմբերի, 1993 թ.
CRC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա	23-ը հունիսի, 1993 թ.	22-ը հուլիսի, 1993 թ.
ICRMW	Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա	----	----
CPPED	Բոլոր մարդկանց հարկադրական անհետացումից պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիա ²²	10-ը ապրիլի, 2007 թ.	----
CRPD	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա	30-ը մարտի, 2007 թ.	22-ը հոկտեմբերի, 2010 թ.
ICESCR - OP	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրություն	29-ը սեպտեմբերի, 2010 թ. ²³	

²² Պայմանագիրը դեռևս ուժի մեջ չի մտել:

²³ Հայաստանն այս պայմանագիրը առայժմ միայն ստորագրել է:

ICCPR-OP1	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից առաջին կամընտիր արձանագրություն	23-ը հունիսի, 1993 թ.	23-ը սեպտեմբերի, 1993 թ.
ICCPR-OP2	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրություն՝ ի վերացումն մահապատժի	-----	-----
OP-CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն	14-ը սեպտեմբերի, 2006 թ.	14-ը դեկտեմբերի, 2006 թ.
OP-CRC-AC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն զինված հակամարտություններում երեխաների ներգրավվածության մասին	30-ը սեպտեմբերի, 2005 թ.	21-ը մարտի, 2005 թ.
OP-CRC-SC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական	30-ը սեպտեմբերի, 2005 թ.	30-ը հուլիսի, 2005 թ.

	պրոնոզրաֆիայի մասին		
OP-CAT	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիային կից կանընտիր արձանագրություն	14-ը սեպտեմբերի, 2006 թ.	14-ը հոկտեմբերի, 2006 թ.
OP-CRPD	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային կից կանընտիր արձանագրություն	30-ը մարտի, 2007 թ.	----

Հայաստանի Հանրապետությունը և ՄԱԿ-ի պայմանագրային մարմինները²⁴

Պայմանագիրը	Փաստաթղթի տեսակը	Պայմանաճանդ	Թվականը	Անվանումը
CERD	Ազգային զեկույց	CERD/C/ARM/5-6	27/08/2010	2004 թ. ներկայացման ենթակա հինգերորդ ու վեցերորդ ազգային պարբերական զեկույցները
	Եզրափակիչ դիտողություններ	A/57/18(SUPP)	01/11/2002	Ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտողությունները (269-291 պարբերություններ)

²⁴ Զեկույցները ներկայացված են ըստ յուրաքանչյուր պայմանագրի՝ հետընթաց հերթականությամբ, 2010թ. նոյեմբերի դրությամբ: Աղյուսակում ներառված բոլոր զեկույցները՝ ըստ նշված պայմանաճանճների, տեղակայված են <http://tb.ohchr.org/default.aspx?country=am>, ինչպես նաև <http://www.un.am> կայքէջերում:

	Ազգային զեկույց	CERD/C/372/Add.3	13/05/2002	2000 թ. ներկայացման ենթակա չորրորդ ազգային պարբերական զեկույցը
	Եզրափակիչ դիտողութ- յուններ	CERD/C/304/Add.51	19/03/1998	Ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտողությունները
	Ազգային զեկույց	CERD/C/289/Add.2	28/11/1997	1996 թ. ներկայացման ենթակա երկրորդ ազգային պարբերական զեկույցը
CEDAW	Եզրափակիչ դիտողութ- յուններ	CEDAW/C/ARM/CO/4/REV.1	05/02/2009	Եզրափակիչ դիտողություններ
	Եզրափակիչ դիտողութ- յուններ	CEDAW/C/ARM/CO/4	28/01/2009	Եզրափակիչ դիտողություններ

	Պատասխաններ լրացուցիչ հարցերին ու հարցադրումներին	16/12/2008	CEDAW/C/ARM/Q/4/ADD.1	Պատասխաններ լրացուցիչ հարցերին
	Լրացուցիչ հարցեր ու հարցադրումներ	04/09/2008	CEDAW/C/ARM/Q/4	Լրացուցիչ հարցեր
	Երրորդ ու չորրորդ ազգային պարբերական միացյալ զեկույցները	28/12/2007	CEDAW/C/ARM/4	Ազգային զեկույց
	Կոմիտեի եզրափակիչ դիտողությունները - CEDAW (25–69 պարբ. ներ)	23/08/2002	A/57/38(SUPP)	Եզրափակիչ դիտողություններ
	Երկրորդ ազգային պարբերական զեկույցը	09/09/1999	CEDAW/C/ARM/2	Ազգային զեկույց
	Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտողությունները	12/08/1997	A/52/38/Rev.1, Part II paras. 35-68	Եզրափակիչ դիտողություններ

	Ազգային զեկույց	CEDAW/C/ARM/1	26/09/1995	Առաջին ազգային պարբերական զեկույցը
CCPR	Եզրափակիչ դիտողութ- յուններ	CCPR/C/79/Add.100	19/11/1998	1997 թ. ներկայացման ենթակա ազգային զեկույցը
	Ազգային զեկույց	CCPR/C/92/Add.2	30/04/1998	1997 թ. ներկայացման ենթակա ազգային զեկույցը
CRC	Ազգային զեկույց			2010 թ. ներկայացման ենթակա երրորդ և չորրորդ ազգային զեկույցներ
	Լրացուցիչ հարցեր	CRC/C/Q/ARM/2	10/10/2003	Լրացուցիչ հարցեր
	Ազգային զեկույց	CRC/C/93/Add.6	17/07/2003	2000 թ. ներկայացման ենթակա ազգային պարբերական երկրորդ զեկույցը
	Եզրափակիչ դիտողութ- յուններ	CRC/C/15/Add.119	24/02/2000	Երեխայի իրավունքների հարցե- րով կոմիտեի եզրափակիչ դիտո- ղությունները

	Լրացուցիչ հարցեր	CRC/C/Q/ARM/1	26/02/1999	Լրացուցիչ հարցեր
	Ազգային զեկույց	CRC/C/28/Add.9	31/07/1997	
CESCR	Եզրափակիչ դիտողություններ	E/C.12/1/Add.39	08/12/1999	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտողությունները
	Ազգային զեկույց	E/1990/5/Add.36	08/03/1999	
	Լրացուցիչ հարցեր	E/C.12/Q/ARM/1	11/12/1998	Լրացուցիչ հարցեր
	Ազգային զեկույց	E/1990/5/Add.36	05/12/1998	Նախնական զեկույցը
CAT	Եզրափակիչ դիտողություններ	A/56/44(SUPP)	17/11/2000	Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտողությունները (33-39 պարբերություններ)

	Ազգային զեկույց	CAT/C/43/Add.3	13/09/1999	1998 թ. ներկայացման ենթակա ազգային պարբերական երկրորդ զեկույցը
	Եզրափակիչ դիտողութ- յուններ	A/51/44, paras.84-101	09/07/1996	Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտողությունները
	Ազգային զեկույց	CAT/C/24/Add.4/Rev.1	31/01/1996 17/01/1996 21/12/1995	

Հապավումներ

Պայմանագրեր

CAT	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա
CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
CRC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա
CRPD	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա
ICCPR	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
ICCPR-OP1	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից առաջին կամընտիր արձանագրություն
ICCPR-OP2	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից երկրորդ կամընտիր արձանագրություն՝ ի վերացումն մահապատժի
ICERD	Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա
ICESCR	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր
ICESCR-OP	Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրություն

ICPPED	Բոլոր մարդկանց հարկադրական անհետացումից պաշտպանելու մասին միջազգային կոնվենցիա
ICRMW	Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա
OP-CAT	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն
OP-CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն
OP-CRC-AC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն զինված հակամարտություններում երեխաների ներգրավվածության մասին
OP-CRC-SC	Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին
OP-CRPD	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրություն

Պայմանագրային մարմիններ

CAT	Խոշտանգումների դեմ պայքարի հարցերով կոմիտե
CCPR	Մարդու իրավունքների հարցերով կոմիտե
CEDAW	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտե

CERD	Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման հարցերով կոմիտե
CMW	Միգրանտ աշխատողների հարցերով կոմիտե
CRPD	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե
SPT	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի հարցերով ենթակոմիտե

Այլ

ԸԴ	Ընդհանուր դիտարկումներ
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակ
ՀՏՎ	Հանրային տեղեկատվության վարչություն
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄԻԳՀ	Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար
ՄԻԳՀԳ	Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ
ՄԻՀՀ	Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
ՊՀԴ/UPR	Պարբերական համապարփակ դիտարկում

Տնտնոցխոյ/ECOSOC

Տնտեսական և սոցիալական հարցերով խորհուրդ

Օգտագործված գրականության և կայքէջերի ցանկ

Այն ամենը, ինչ կուզենայի իմանալ ՄԱԿ-ի մասին. – Երևան, 2009 թ. – 66 էջ:

Հիմնական փաստեր Միավորված ազգերի կազմակերպության մասին.- Երևան, 2002 թ.- 334 էջ:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների մանդատը. – Երևան, 2008 թ.- 32 էջ:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի ընտրանի. – Երևան, 2009 թ.- 488 էջ:

Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը. Գործողություն հանուն առաջընթացի // Մարդկային զարգացման ազգային զեկույց. – Հայաստան, 2000 թ. – 180 էջ:

Human Rights: A Basic Handbook for UN Staff.- OHCHR, United Nations Staff College Project. – 116 pages.

The United Nations Today. – New York, 2008. -370 pages.

The United Nations Human Rights Treaty System: An Introduction to the core human rights treaties and the treaty bodies.- Fact Sheet No.30.- OHCHR. – 60 pages.

Working with the United Nations Human Rights Programme: A Handbook for Civil Society. – New York and Geneva, 2008. – 192 pages.

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ.

<http://www.un.am>

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ.

<http://www.ohchr.org>

Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական գրասենյակ. <http://www.un.org/rights/>

ՄԱԿ-ի պայմանագրերի պաշտոնական կայքէջ.
<http://treaties.un.org/>)

ՄԱԿ-ի փաստաթղթերի պաշտոնական կայքէջ.
<http://ods.un.org/>

**Միավորված ազգերի կազմակերպության ձեռնարկ մարդու
իրավունքների վերաբերյալ**

2010 թ. դեկտեմբեր

United Nations Handbook on Human Rights

December 2010



UN Department of Public Information
Yerevan Office
UN AN-2000-December 2010
UNO/DPI Yerevan/110



Տպագրված է «Բավիղ» ՍՊԸ տպարանում
Տպաքանակը՝ 2000, 1/16 6 տպագրական մամուլ
Հասցե՝ Ք. Երևան, Ուլնեցու 68, հեռ.՝ 20-80-85
E-mail: bavigh@mail.ru , www.bavigh.am